

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԵՏՀՐԱՏԻ  
ԵԺԱՆԱԳԻՆ  
ԽԱԴԱՐԱՆ

№ 29, 33, 39

№ 29, 33, 39

ՀՈՎԷ ՔՈՒՄԱՆՅԱՆ

Լ Ե Ք Ե Ն Գ Ն Ե Ր  
Բ Ա Լ Լ Ա Գ Ն Ե Ր  
Յ Ե Ր Ք Ե Ր

ՊԵՅՄԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՆՔԵՎԱՆ

1934

18 DEC 2017

ՊԵՏԶՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ


№ 29

№ 29

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

# ԼԵԳԵՆԴՆԵՐ

ՔՍԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ  
ՓԱՐԿԱՆԱ  
ԱԽՔԱՍԱՐ  
ԱՂՋԿԱ ՍԻՐՏԸ  
ՄԻԿԱՔԻԼ ՍԵՂՐԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՆԱՐԱՎՊԵՆՏԻՑԻՆ  
ՇԵՐԵՎԱՆ 1984

Պատ. խմբագիր՝ Յե. Չարնց  
Նյութերը տպագրութեան համար պատրաստեց Նվարդ Թումանյան  
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանքյան  
Սրբագրիչներ՝ Սոս Հակոբյան, Վ. Մանուկյան



1-334299

Հրատար. № 2749, Գլավիտա № 8312(բ),  
պատվեր № 2088, արած 5000. Գե-  
հրատի տպարան, աս. ֆ. 6 72×105, մեկ  
ապ. թերթում 102.40՝ տպ. նշ. հանձնված  
է արտագրութեան 5/X 1938 թ. ստորա-  
գրված է տպագրութեան 7/II 1936 թ.

## Յ Մ Կ Ա Բ Ե Ր Դ Ի Ա Ռ Ո Ւ Մ Ը

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Բ

Հեյ, պարոններ, ականջ արեք  
Թափառական աշուղին,  
Սիրուն տիկնայք, ջահել տղերք,  
Կով ուշ դըրեք իմ խաղին:

Մենք ամենքս հլուր ենք կյանքում  
Մեր ծնընդյան փուշ որից,  
Հերթով գալիս անց ենք կենում  
ես անցավոր աշխարհից:

Անց են կենում սեր ու խընդում,  
Գեղեցկութուն, գանձ ու գահ,  
Մահը մերն է, մենք մահինը,  
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լավ իմացեք,  
Վոր խոսվում է դարեդար,  
Յերնեկ նըրան, վոր իր գործով  
Կապրի անվերջ, անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,  
Անեճք նըրա չար գործքին,  
Վորդիդ լինի, թե հերն ու մեր,  
Թե մուրագով սիրած կին:

Յես լավության խոսքն եմ ասում,  
 Վոր ժրպտում է մեր սրտին.  
 Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,  
 Լավ արարքը, լավ մարդին:

Ե՛լ, լավ կենաք, ականջ արեք,  
 Մի բան պատմեմ հիմի ձեզ,  
 Սոսքըս, տեսեք, ուր է գնում,  
 Քաջ վորսկանի գլուխի պես:

## I

Նաղիւր Շահը գորք հավաքեց,  
 Չորք հավաքեց անհամար,  
 Յեկավ թըմկա բերդը պատեց,  
 Ինչպես գիշերն են խավար:

— Հե՛յ, քաջ թաթուր, կանչեց Շահը,  
 Անմահ ելիւր քեզ կարծում.  
 Յեկ, բերել եմ լես քու մահը,  
 Ի՞նչ ես թառել ամբողջում:

— Մի պարծենա, գոռոզ Նաղիւր,  
 Պատասխանեց են հրական.  
 Գըլխովը շատ ամպեր կանցնեն,  
 Սարը միշտ կա անաստան:

Ասավ, կանչեց իր քաջերին,  
 Թուրը կապեց հավլունի,  
 Թըռավ, հեծավ նըթույզ իր ձին,  
 Դաշտը իջավ արջունի:

Ու քառսուն որ, քառսուն գիշեր  
 Կըռիվ տըվին անդադար,  
 Ընկան քաջեր, անթիվ քաջեր,  
 Բերդի գըլխին հավասար:

Իրան, Թուրան վողջ չեկել են,  
 Թաթուրն անհաղթ, աննըկուն,  
 Չորք ու բաբան խորտակվել են,  
 Նըրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, հաղթանակով  
 Իր ամբողջն է դառնում նա.  
 Սպասում է ենտեղ կինը,  
 Ձահել կինը սեաչյա:

## II

Են տեսակ կին,  
 Յես իմ հոգին,  
 Թե աշուղն էլ ունենար,  
 Առանց զենքի,  
 Առանց գորքի  
 Շահերի դեմ կը գընար:

Միբո հընոց  
 Կրակ ու բոց  
 Ենպես աչքեր թե ժրպտան,  
 Մարդու համար  
 Որվա պես վառ  
 Գիշերները լույս կը տան:

Վարդի թերթեր  
 Ենպես շուրթեր  
 Թե հաղթութուն քեզ մաղթեն,  
 Ել քեզ վոչ Շահ,  
 Վոչ ահ ու մահ,  
 Վոչ զենք ու զորք կը հաղթեն:

## III

Ու կըսվի դաշտում Շահի առաջին  
 Արին մի անգամ գովքը սիրունի.  
 Նըրան՝ իր անսքսով, հասակով, ասին,  
 Ձի հասնի չըքնազ հուրին Իրանի:

Ծով են աչքերը Զավախքի դրստեր  
 Ու կորչում ե մարդ նըրա հայացքում,  
 Ճակատը ճերմակ են ձյունից ել դեռ,  
 Վոր բարձր Արուլի գազաթն ե ծածկում:  
 Նա չե շունչ, հոգին իշխան թաթուլի,  
 Նըրա սիրտին ե հարբած են հրական,  
 Նըրա ժպիտն ե քաջին ուժ տալի,  
 Վոր դաշտն ե իջնում առջուծի նըման:  
 Թե տիրես, մեծ Շահ, դու նըրա սըրտին,  
 Թաթուլն ել անգոր կընկնի վոտիզ տակ,  
 Հանգիստ կը տիրես ե թըմուկ բերդին,  
 Վոր չես կարենում եսքան ժամանակ:

## IV

Եսպես ե ասել հընուց եդ մասին  
 Ֆարսի բուլբուլը, անմահ Ֆիրդուսին.

Ի՞նչը կըհաղթի կյանքում հերոսին,  
 Թե չը լինին  
 Կինն ու գինին:

Արևի նման ճակատը պայծառ,  
 Նայում ե խըրոխտ, կանգնած ինչպես սար,  
 Ո՛վ կանի նըրան դեռնին հավասար,  
 Թե չը լինին  
 Կինն ու գինին:

Պարում ե ասես կըսելիզ գընալիս,  
 Գետընքից վերև թըռչում ման գալիս.  
 Ո՛վ ցած կը բերի նըրան թըռչելիս,  
 Թե չը լինին  
 Կինն ու գինին:

Թեկուզ ե արար աշխարհ գա վըրան,  
 Կերթա գեմ ու դեմ, տուր չի տալ իրան,  
 Ռուստեմ Զալն ել չի հաղթիլ նըրան,  
 Թե չը լինին  
 Կինն ու գինին:

## V

Ու զըրկեց Շահը իր թովիչ չերգչին.  
 Դընա տես, ասավ, Թըմկա տիրուհուն,  
 Յերգի իմ սերը նըրա առաջին,  
 Պատմի իմ փառքը ու գանձը անհուն:  
 Սոստացի նրան իմ վոսկի գահը,  
 Սոստացի նրան ամեն, ամեն բան,  
 Ինչ վոր կարող ե խոստանալ Շահը,  
 Յերկրակալ Շահը իր սիրած կընկան:

Ուր անեղ կըռվով չի մտնիլ արքան,  
 Ղոնաղ ե աշուղն իրեն սաղի հետ.  
 Յեվ անա մի որ ծեր, թափառական  
 Մի աղքատ աշուղ մըտով թմկաբերդ:

## VI

Գոռում են, դողում թըմկա ձորերը,  
 Կանգնած ե թաթուղ Շահի հանդիման.  
 Չարկում են, զարկվում դուշման զորքերը:  
 Արյունը հոսում են Քրուի նման:

Չարկում են, զարկվում դուշման զորքերը,  
 Արյունը հոսում են Քրուի նման.  
 Յերգում ե աշուղն իր Շահի սերը,  
 Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում ե մատաղ թըմկա տիրուհին.  
 Յեվ վրդովում են իր միտքը թագուն  
 Դավաճան գործի ամոթը խորին  
 Յեվ արքայական փառքն ու մեծություն...

Լըսում ես դու, սիրուն տիկին,  
 Այ նազանի աննրման.  
 Նալի Շահին, իրեն զորքին,  
 Աշխարհքի տերն անսահման...

Մեզ պես տըկար մարդ ե նա չիլ  
 Սիրուններին միշտ գերի.  
 Քու ճակատին թագ ե վալի,  
 Լինիս շքեղ թագուհի...

Լըսում ե չքնաղ թըմկա տիրուհին  
 Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից,  
 Ու դարձավ նա լնու, դալնկ, մըտախոհ,  
 Ու քունը փախավ սիրուն աչքերից...

## VII

Դարձավ իր կըռվից իշխան թաթուղը,  
 Դարձավ հաղթական իրեն զորքի հետ,  
 Սըրբեց, պատյանը դըրավ կե՞ թուրը,  
 Յնծության ձայնից դողաց թըմկաբերդ:

Խընջույք ե սարքել թըմկա տիրուհին,  
 Յերեկ ե արել խավար գիշերը.  
 Հեղեղի նման հոսում ե գինին,  
 Ու քեֆ ե անում Չավախքի տերը:

Պըտուլտ ե գալի չըքնաղ տիրուհին,  
 Անցնում ե, հակում սեղաններն ամեն,  
 Հորդորում, խնդրում, վոր ուրախ լինին,  
 Վոր լիքն ու առատ բաժակներ քամեն:

— Հապա լըցրե՛ք, իմ քաջ հյուրեր,  
 Բաժակներդ լիուլի,  
 Խմենք — Աստված կըտրուկ անի  
 Թուրը իմ քաջ թաթուղի:

— Ե՛յ, Տեր Աստված կըտրուկ անի  
 Թուրը մեր քաջ իշխանի,  
 Նըրա շուքը միշտ հանապազ  
 Մեր գլխիցը անպակաս:

Ու թընդում ե թըմուկ բերդը  
Են աղմուկից խընդուխջան,  
Վարտում են սաղն ու լերդը  
Գու ձայներով հայթական:

— Են միջին ամպից արծիֆն ե իջնում,  
Սարի արծիվը շեշտակի թափով:

— Են թըմկա բերդից թաթուղն ե իջնում,  
Թշնամու հոգին լցնում սարսափով:

— Են թըմկա ձորում սև ամպն ե գոռում,  
Են շանթն ե ձայթում ենպես ահարկու:

— Են թըմկա ձորում թաթուղն ե կըսվում,  
Են թուրն ե շաշում ենպես ահարկու:  
Ի՞նչ սարի արծիվ կհասնի քաջին,  
Ի՞նչ Շաս կըկանգնի նրա սուաջին:

Ու չի դադարում լերդի հետ վարար  
Կախեթի գինին խելազար հոսել,  
Սըմում են տիկնոջ թանգ կյանքի համար,  
Վոր են ժայռերին ծաղիկ ե բուսել:

Սըմում են կռվող քաջերի փառքին,  
Վոր կըսվի դաշտում կյանք չեն խընայում,  
Յեկ ընկածների սուրբ հիշատակին,  
Վոր չերկընքիցն են այժմ իրենց հայում...

Պըսուլտ ե գալի ծաղիկ տիրուհին,  
Սնցնում ե, հըսկում սեղաններն ամեն,  
Հորդորում, խընդրում, վոր ուրախ լինին,  
Վոր լիքն ու սոսա բաժակներ քամեն:

— Ո՞ք տիրուհի, Աստված վկա,  
Ել չենք կարող մենք խըմել:  
Ել ուժ չըկա, ել տեղ չըկա,  
Շատ ենք խըմել ու հոգնել...

Ու հանգչում ե թըմուկ բերդը,  
Պապանձում ե ու մարում,  
Հարբած, հոգնած տերն ու զորքը  
Մըրափում են խավարում:

### VIII

Լուռ ու խավարչաին կամարների տակ,  
Հոգնած ու քընած բազմության վըրով  
Թուշում են, թուշում, սև, շարագուշակ  
Յերազներն անեղ անվերջ խըմըներով:

Յերազ ե տեսնում թաթուղ իշխանը,  
Վոր վիշապ ոճը չեկել ե ահա,  
Յեկել փաթաթվել, իր բերդը պատել,  
Գըլուխը դրել չեա պոչի վրա:

Ու բարձրանում ե հըրեջն ահռելի,  
Իրեն գըլուխը բարձրացնում ե վեր,  
Բարձրացնում մինչև բարձունքը բերդի,  
Մինչև թաթուղի պալատն ու տըներ:

Պառկած ե իրրե թաթուղ իշխանը  
Նազելի կնոջ գըլուխն իր կըրծքին,  
Ու իրը ասում է՝ վեր կաց, իմ հրեշտակ,  
Թո՛ղ, վոր սպանեմ չես եղ հըրեջին:



Եսպես ե ասուամ Թաթուլ իշխանը,  
 Ու գարհուրանքով տեսնում ե հանկարծ,  
 Իրեն սիրելի կընոջ գըլխի տեղ  
 Ոճի գըլուխն ե կըրծքին ծանրացամ...

Ե՛յ, հըսկեցեք, ի՛նչ եք քնուամ,  
 Քաջ զինվորներ Թաթուլի.  
 Ո՞վ ե, տեսեք, տանջվում մըթնում,  
 Քուն չի աչքին մոտ գալի:

Ձը լինի թե հաղթահարվամ,  
 Ճարը հատամ թըշնամին  
 Դավ ե դնում մութն ու մեռամ  
 Կես գիշերվա ես ժամին:

Վեր կացեք վեր, ամբողջ գիշեր  
 Մարդ ե գնում ու գալի.  
 Հե՛յ, գարթնեցեք, առյուծ քաջեր,  
 Պահապաններ Թաթուլի:

Վեր կացեք, վեր, հարբեցրել ե  
 Իր հաղթական հյուրերին,  
 Բաց ե անում դուռն ու դարպաս  
 Չեր դավաճան տիրուհին:

Դավ... դավ... լիլեք... կոչնակ... պահնակ...  
 Ձենք առեք շո՛ւտ... ձի հեճեք, ձի...  
 Ճըռընչում են, գըլըրդում են  
 Դարպասները լերկաթի...

## X

Բաց արավ ցերեկն իր աչքը պաշտառ  
 Աշխարհքի վըրա, Զավախքի վըրա,  
 Ավերակ բերդին, սև ամպի նման,  
 Ծուխն ու թըշնամին չոքել են անա:

Հաղթության փառքով ու գինով հարբամ  
 Քընամ են բերդի և՛ զորքերն և՛ տեր,  
 Ու հավիտյան ել մընացին քնամ,  
 Դավին անտեղյակ, ցավին անտարբեր:

Նըստամ ե Շահը, նըրա առաջին  
 Ահա իրիկվան քեֆի սեղանը.  
 Նայում ե Շահը անտեր գահուլքին,  
 Մտըռոյն անցնում ե աշխարհքի բանը:

Աշխարհքում հաստատ չկա վոչ մի բան  
 Ու մի հավատալ լերբեք վոչ մեկին.  
 Վոչ բախտի, փառքի, վոչ մեծ հաղթության,  
 Վոչ սիրամ կնկա տըվամ բաժակին...

Ու լի դառնությամբ հարցընում ե նա  
 Դալուկ, մարմարիոնն թըմկա տիրուհուն.  
 — Պատասխան տուր ինձ, մատնիչ սեաչյա,  
 Մի՛թե Թաթուլը քաջ չեր ու սիրուն...

— Քաջ եր ու սիրուն քեզնից առավել.  
 Մի բարձր ու ազնիվ անգամարդ եր նա.  
 Կնոջ մատնությամբ ամրոց չեր առել,  
 Չեր լիղել կյանքում լերբեք խարբրա...

Եսպես տիկինը տըվավ պատասխան.  
Անհուն ցատուժից մըռընչաց Շահը.  
— Հեյ, դահիճ, գոռաց գազանի նըման,  
Դահիճը խկուչն մտավ սրահը:

## XI

Դահիճն լեկավ վտտից գըլուխ  
Կարմիր հագած ու արյուն,  
Ու դուրս տարան իր պալատից  
Թըմկա չըքնաղ տիրուհուն:

Տարան անտակ են ժեռ քարից,  
Վոր կանգնած է մինչ ետոր,  
Են ահավոր քարի ծերից  
Գըլըրեցին դեպի ձոր:

Գեկ ու ազվես լեկան հանդից  
Ագահ սիրտը լսիեցին,  
Ցին ու ազոսով իջան ամպից,  
Սև աչքերը հանեցին:

Անցավ անտես ու աննըման  
Են սիրուհը աշխարհից,  
Ինչպես ծաղիկն անցած գարնան,  
Վոր չի ծաղկիլ ել նորից:

Անցավ դալուժ են մեծ արքան  
Իրեն փառքով ու գորքով,  
Անցավ Թաթուչն են հաղթական  
Ու իր քաջերն են կարգով:

Ու նրանցից մենակ անմեռ  
Ես զրույցը հասավ մեզ,  
Վոր մեզանից հետո լեկ դեռ  
Պետք է խոսվի միշտ եսպես:

## XII

Հեյ, պարոններ, ականջ արեք  
Թափառական աշուղին,  
Սիրուն տիկնալք, Չահեկ տըղերք,  
Կավ ուշ գրեք իմ խաղին:

Ամենքս եսպես հյուր ենք կյանքում  
Մեր ծնընդյան փուշ որից,  
Հերթով գալիս անց ենք կենում  
Ես անցավոր աշխարհից:

Անց ենք կենում... միտն անմահ  
Գործն է խոսվում լավ ու վատ.  
Ա՛խ, լերանի՛ ու՛ մարդ կըզա  
Ու մարդ կերթա փնտրատ:

1902



1-334294

## Փ Ա Ր Վ Ա Ն Ա

### I

Բարձրագահ Արուշն ու Մըթին սարեր  
Մեջք մեջքի տրված կանգնել-վեհափառ,  
Իրենց ուսերին, Ջավախքից ել վեր՝  
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ հնատեղ արծըվի նըման,  
Ծիծղուն, կապուտակ լերկնքի ծոցում,  
Նըստում եր են սեզ սարերի արքան  
Իրեն Փարվանա ճերմակ ամրոցում:

Փարվանա արքան մի աղջիկ ուներ.  
Ու վոչ մի վորսկան դեռ իրեն որում  
Ենքան գեղեցիկ լեղնիկ չէր տեսել՝  
Իր վորան անելիս Մըթին սարերում:

Աշխուժ մանկությամբ դարդարում եր նա  
Ծերության որերն ու սարերն իր հոթ,  
Ու ապրում եր ծեր արքան Փարվանա  
Իրեն են քընքուշ ծաղկով բախտավոր:

Մեծ բախտը սակալն առջեն եր դեռ.  
Յեկավ են որն ել հասավ լերջանիկ,  
Ու զըրկեց արքան ուրախ դեսպաններ  
Ամեն մի ամրոց, ամեն արքունիք:

### II

— Վճրտեղ ե, ասավ, են քաջը, թե կա,  
Իմ չընաշխարհիկ դըստերն արժանի,  
Թող առնի իր ձին, գենքըն ու զըրահ,  
Գն, ցույց տա իրեն, իր բախտը տանի...

Հագած, կապած գենք ու զըրահ,  
Ջիանք հեծած ամենի,  
Ահա լեկել հավաքվել են  
Կըտրիճները Կովկասի.  
Ծեր Փարվանա թագավորի  
Ապարանքի հանդիման  
Կազմ ու պատրաստ սպասում են  
Մոտիկ ժամին մըրցության:  
Ըսպասում ե վողջ աշխարհքը՝  
Յեկած, կիտված Փարվանա,  
Թե վոթ կըտրիճն արդոք պիտի  
Են սիրունին տիրանա:

Հընչեց փողը: Ահա փուռջ-փուռջ  
Իրրանիկներ, նաժիշտներ,  
Ահա աղջիկն իր նազելի  
Ու թագավորն ալեհեր:  
Հայրը ինչպես մոռալ մի ամպ,  
Աղջիկն անուշ մի լուսին,  
Ամպ ու լուսին իրար փարված՝  
Դուրս են գալի միասին.  
Հատաչում ե վողջ աշխարհքը.  
Կըտրիճները, քարացած,

Յերազներէ մեջ են ընկնում՝  
 Ես աշխարհքից վերացած:

— Նալիր, գըստրիկ, իշխանագուն  
 Ես քաջերին բաշնալանջ,  
 Ալժմ պիտի հանդես դուրս գան,  
 Պալքար մըտնեն քո առաջ.  
 Մեկը իրեն ուժը ցույց տա,  
 Մյուսը՝ շընորհքն իր բազկի,  
 Վորը՝ ճարպիկ ճխարշավը,  
 Վորն ել թափը իր վաղքի:  
 Իսկ յերբ կըռիֆն առնի դադար,  
 Հայտնի լինին քաջն ու վատ,  
 Ու յերբ անցնեն մեր առջևից  
 Կըտրիճները պայագատ,  
 Ընտրիր, զարկիր, ձեռքիդ խնձորն  
 Անհաղթներից անհաղթին,  
 Վոր վողջ աշխարհ մալիլ մընա  
 Անզուգական քո բախտին:

Ասով արքան ձեռքը ձրպեց,  
 Նըշան տըվավ պալքարին,  
 Այն ինչ՝ աղջիկն առաջ յեկավ՝  
 Կարմիր խնձորն իր ձեռին:  
 — Գուցե, հայրիկ, տկար լավին  
 Հաղթի մի վես տըմարդի,  
 Բաց չի կարող լինել յերբեք  
 Նա սիրելին իմ սըրտի...:

— Եյ, Փարվանա, չըքնաղ փերի,  
 Ի՞նչն ե հավան քո սըրտին, —  
 Խըռնըվում են կըտրիճները,  
 Խընդրում կըրկին ու կըրկին: —  
 Գանձ ես ուզում, վոսկի՞, արծաթ,  
 Անգին քարեր ու գոհմիր,  
 Ա՞ստղ ես ուզում, ել յերկընքից  
 Վեր կը բերենք քեզ համար:  
 — Ինչի՞ս են պեաք վոսկին, արծաթ  
 Յեկ կամ աստղը յերկընքի,  
 Վոչ ել գոհար եմ պահանջում  
 Սեր-ընկերից իմ կյանքի:  
 Յես նըրանից հուր եմ ուզում,  
 Անշեջ հուրը սըրբազան,  
 Ով կը բերի անշեջ հուրը,  
 Նա յե ընտարած իմ փեսան...:

Ասով աղջիկն, իրար անցան  
 Կըտրիճները քաջարի,  
 Զիանք հեծած, թրուան հապճեպ  
 Դեպի շորս կողմն աշխարհի:  
 Թըռան, շուտով գըտնեն, բերեն  
 Անշեջ հուրը աղջկան.  
 Բաց... տարիք են գալիս, գընում,  
 Նըրանք չը կան ու չը կան:

## III

— Հայրիկ, ինչո՞ւ չես չը դարձան  
 Են քաջերը սիրատենչ.  
 Մթթե, հայրիկ, ինձ մոռացան,  
 Ե՛լ չեն բերիլ հուրն անշեջ:

— Վո՛չ, իմ դըստրիկ, կը գան անշուշտ  
 Ու կը բերեն ես տարի.  
 Կըռիֆներով արշունըռուշտ  
 Լիքն ե ճամփեն քաջերի:

Ո՛վ իմանա, պետք ե անցնեն  
 Մութ աշխարհքից, սև ջըրից.  
 Ո՛վ իմանա, պետք ե փախցնեն  
 Յոթգըլխանի դեերից:

Անց ե կենում դարձյալ տարին.  
 Նայում ե կույսն ամեն որ.  
 — Ո՛ւր ե, հայրիկ, լէրը կը դա նա,  
 Սարից թըռած ձիավոր:

Միշտ չերազում չես տեսնում եմ  
 Են հերոսին ապագա,  
 Հուր կարոտով թըռած իմ դեմ.  
 Լուսանում ե... ու չըկա:

— Կը գա, դատրիկ իմ թանկագին,  
 Հեշտ չի բերվում հուրն անշեջ.  
 Շատ-շատ անգամ բերող հողին  
 Ինքն ե աչքվում նըրա մեջ...

Անց ե կենում դարձյալ տարին.  
 Նայում ե կույսն ամեն որ.  
 Վո՛չ մի սարից, վո՛չ մի ճամփում  
 Չի չերևում ձիավոր:

— Հայրիկ, հայրիկ, մթթե չը կա  
 Ես աշխարհքում անշեջ հուր.  
 Թառամում ե սիրտըս անա,  
 Պաղ ե այս կյանքն ու տըխուր...

Ել չի խոսում. մոռալ, տըրտում,  
 Լուռ ե արքան ալևոր,  
 Սե-սև ցավերն իրեն սըրտում  
 Միտք ե անում գըլխակոր:

## IV

Եսպես անցան շատ տարիներ.  
 Տըխուր աղջիկն արքայի  
 Նայեց, նայեց սարերն ի վեր,  
 Ճամփաներին ամալի:  
 Հույսը հատավ... ու լաց չեղավ.  
 Ենքան արավ լաց ու կոծ,  
 Վոր լիճ կըտրեց արտասուքը,  
 Ծածկեց քաղաքն ու ամրոց,  
 Ծածկեց, կորան, ինքն ել հեռը...  
 Այժըմ հնտեղ տըրտմաշուք  
 Խոր Փարվանա լիճն ե ծըփում  
 Հըստակ, ինչպես արտասուք:  
 Ու են վըճիտ ջըրերի տակ  
 Ճուլց են տալի մինչ հսոր

Ծեր արքայի ճերմակ ամրոցն  
Ու շենքերը փառավոր:

Ասում են, են թիթեռները,  
Վոր գիշերվա խավարում,  
Վորտեղ ճըրագ, վորտեղ կըրակ,  
Վորտեղ լույս է հենց վառվում,  
Հավաքվում են, շուրջը պատում,  
Մեջն են ընկնում խերագար,  
Ասում են, թե՛ են Փարվանա  
Ջահիլներն են սիրավառ:

Ըշտապելուց թե են առել,  
Դարձել թեթե թիթեռներ,  
Ու տակավին հուր տեսնելիս  
Մեջն են ընկնում անհամբեր:  
Ջանք է անում ամեն մինը  
Շուտով տանի, տիրանա...  
Ու այրվում են, այրվում անվերջ  
Կըտրիճները Փարվանա:

1902

## Ա Խ Թ Ա Մ Ա Ր

Ծիծաղախիտ Վանա ծովի  
Փոքրիկ գյուղից առափնյա,  
Ծոփն է մըտնում գաղտագողի  
Ամեն գիշեր մի արդա:

Ծոփն է մըտնում, առանց նավակ,  
Բազուկներով առնացի  
Ջուրը ճողփում, լող է տալի  
Դեպի կըզզին զիմացի:

Պավար կըզզուց պարզ ու պայծառ  
Մի լույս կանչում է նըրան,  
Մի վառ փարոս նըրա համար, —  
Չը մոլորի իր ճամբան:

Սիրուն Թամարն ամեն գիշեր  
Աչնպես կըրակ է անում,  
Յե՛վ ըսպտտում է անհամբեր  
Աչնտեղ՝ մոտիկ դարանում:

\* \*

Ծըփում է ծոփն ալեծածան,  
Ծըփում է սիրաբ տըղի.  
Գոռում է ծոփն անհեղաձայն,  
Նա կըռվում է կատաղի:

Յեզ Թամարը սըրտատըրով  
Արդեն լըսում ե մտտիկ  
Ջըրի ճողփյուն, ու վողջ մարմնով  
Միրուց այրվում ե սաստիկ:

Լըոեց: Ծովի խավար ասիին  
Կանգնեց սև-սև մի ըստվեր...  
Ահա և նա... իրար գըտան...  
Կասկածավոր լուռ գիշեր...

Միայն ալիքը վանա ծովի  
Մեղմ դիպչում են ասիերքին,  
Հըրճըրելով հեռանում են  
Շըշունջներով անմեկին:

Նըրանք ասես փըսփըսում են...  
Ու աստղերը կամարից  
Ակնարկելով բամբասում են  
Լիբբ, անամոթ Թամարից...

Բամբասում են կուսի սըրտում...  
Փամ ե արդեն... ու կըրկին  
Մինն ալեկոծ ծոփն ե մըտնում,  
Մյուսն ազոթում լեզերքին...

\* \*

«Ո՞վ է ջահիլ են խիզախը,  
Վոր հենց հարբած իր սիրով,  
Սըրտից հանած ան ու վախը  
Ծոփն անցնում ե գիշերով:

Ծոփն անցնում ե մյուս ասիերից  
Մեր Թամարին համըրում...

Աղջիկ խըլի նա մեր ձեռից...  
Ինչի տեղ ե մեզ դընում...»

Եսպես ասին վիրավորված  
Կըզզու միջի ջահիլներ  
Ու Թամարի ձեռքով վառած  
Լույսը հանգցրին մի գիշեր:

Մոլորվեցավ խավար ծովում  
Լուզորդ տըղան սիրահար,  
Ու բերում ե հողմը, բերձում  
Հառաչանքներն — «Ա՛խ, Թամար...»

Մոտ ե ձայնը. խոլ խավարում,  
Փայռերի տակ սեպացած,  
Ուր ամենի ծոփն ե գոռում,  
Մերթ կորչում ե խըլացած,  
Ու մերթ լըսվում ուժասպառ,  
«Ա՛խ, Թամար...»

\* \*

Առավոտյան ծովը ծըփաց,  
Ափը ձըգեց մի դիակ,  
Նըրա շուրթին, պաղ, կարկամած,  
Ասես մեռած ժամանակ  
Սառել ելին լերկու բառ.  
«Ա՛խ, Թամար...»

Այն որվանից սըրա համար  
Կըզզին կոչվեց «Ախթամար»:

## Ա Ղ Ջ Կ Ա Ս Ի Ր Տ Ը

(ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ)

Հին արևելքում, մի հին քաղաքում  
 Փուկով մի ջահել աղջիկ էր ծաղկում:  
 Հարուստ էր հերը գալում սիրունի,  
 Անհուն գանձի տեր ու շատ անվանի:  
 Բայց սիրո համար խեղճ ու շեն չըկան,  
 Մի աղքատ տղա սիրեց աղջկան,  
 Աղջիկն էլ նրան սիրեց կաթոգին  
 Յեվ ուզում էին լինեն մարդ ու կին:  
 — Կա թե չըկա,  
 Նա լե, վոր նա...

— Ձե, վոր չե, կանչեց ծընողը փարթամ.  
 Իմ աղջիկն, առավ, սե հողին կըտամ  
 Ու մերկ աղքատին աղջիկ չեմ տալ լես:  
 Ասավ ու կանգնեց են լես քարի պես:  
 Բայց սիրո համար քար ու սար չըկան,  
 Սիրում էր գըթված տղան աղջկան,  
 Աղջիկն էլ նրան սիրում կաթոգին  
 Յեվ ուզում էին լինեն մարդ ու կին:  
 — Կա թե չըկա,  
 Նա լե, վոր նա...

Սաստիկ բարկացավ հարուստն անկուտրում,  
 Փակեց աղջրկան մեծ աշտարակում

Իր սիրած տղլեց ու կյանքից հեռու,  
 — Թող եսպես, առավ, մոռնան իրարու:  
 Բայց սիրո համար փակ ու բանտ չըկան,  
 Սիրում էր անվերջ տղեն աղջրկան,  
 Աղջիկն էլ նրան սիրում կաթոգին  
 Յեվ ուզում էին լինեն մարդ ու կին:  
 — Կա թե չըկա,  
 Նա լե, վոր նա...

Տեսավ իր ձեռքին վոչ մի ճար չըկար,  
 Համառ հարուստը հերսից խելագար,  
 Իրեն աննըման գավաղը միջին,  
 Կըրակի մասնեց աշտարակն են հին:  
 Բայց սերը վորակը հըրդեհ է ձրգեյ,  
 Ի՞նչ անի կնտեղ հըրդեհը մեկ էլ:  
 Ու թեթ բոցերի սաստկության միջում  
 Աղջիկն երվելով ճըչում էր կանչում,  
 — Կա թե չըկա,  
 Նա լե, վոր նա...

Ու երվեց հիմքից աշտարակն անեղ,  
 Երվեց նըրա հեռ են սիրունն անմեղ,  
 Հող-մոխիր դարձավ: Իր սիրտը մենակ  
 Չերվեց հըրաշքով ու սառ մոխրի տակ  
 Մընաց կենդանի... Են մոխրի վըրեն  
 Արտասուք թափեց սիրահար տղեն  
 Ու կորձվ, գնաց, հեռու, շատ հեռու,  
 Իր որը լալու, նըրան փընտրելու,  
 Մենակ, ոտար,  
 Անմըխիթար:



Ո՛վ քընքուլջ գաղտնիք, ո՛վ սիրուն հըրաշք,  
 երված աղջըկա սիրաը մոխրի տակ,  
 Իրեն մոխրի տակ կենդանի չեր դեռ —  
 Վոչ վոք չըգիտեր, վոչ վոք չըգիտեր...  
 Ժամանակ անցավ ես տըխուը դեպքից,  
 Արցունքով թըրջված են մոխրի տակից,  
 Են միշտ կենդանի սըրտից թըրթըռուն  
 Բուսավ խաշխաշի ծաղիկը սիրուն,  
 Կարմիր, թեթեհ,  
 Բայց... սիրաը տե...

Սըգավոր տըղան հուսահատ, թըշվառ  
 Շըրջում եր մոլոր աշխարհից աշխարհ,  
 Չեր գըանում տակաջն կյանքում ել նըրան.  
 Ամեն տեղ վիշտն եր սիրածի մահվան,  
 Վոր հար, թե դարթուն, թե քընի միջում,  
 Տանջում եր նըրան, անդադար տանջում:  
 Բայց սիրո համար վերջ ու մահ չըկան.  
 Տըղի հառաչըը հասավ աղջըկան  
 Անմահ կյանքում  
 Են աշխարհում:

Հասավ, ու շարժված, կարոտ, կարեկից,  
 Թըռավ աղջիկը անմեռ աշխարհքից,  
 Սիրով ու բուլբուլ, թարմ, անուշահոտ,  
 Յերազով լեկավ սիրած տըղի մոտ:  
 — Լըսիը, իմ սըգվոր, լսիը ինձ, ասավ.  
 Իմ մոխրի տակից մի ծաղիկ բուսավ  
 Ու են ծաղիկ մեջ իմ սիրտն ե, վոր կա,  
 Կարոտ, խենթ սիրտը ջահել աղջըկա —

Կիքը սիրով,  
 Յերազներով...

Ուժ ունի լը մեջ նա կախարդական  
 Ու քաղցը արբեցում ենքան ու ենքան...  
 Քամիը ու խըմիը ուժը են ծաղիկի,  
 Նա քեզ կը փըրկի, նա քեզ կը փըրկի...  
 Մոռացնել կըտա իմ հուը սերն ու ինձ,  
 Հեռու կը տանի եզ կոպիտ կյանքից,  
 Ու կապրես անվիշտ և զըվարթ հոգով,  
 Կը խնդաս ընդմիշտ անթառամ կյանքով  
 Ազատ հեռվում,  
 Յերազներում...

Ո՛վ սիրուն հըրաշք, ո՛վ քընքուլջ գաղտնիք,  
 Տըղան են որից դարձավ չերջանիկ:  
 Հարբած նվիրական են ծաղիկի ուժով,  
 Միշտ նոր կարոտով ու նոր աշխուժով,  
 Իրեն չերբեմնի վիշաը մոռացած,  
 Ես կոշտ ու կոպիտ կյանքից հեռացած,  
 Ապրում եր ուրախ, ճոխ վայելքներով,  
 Լեն ու լի սըրտով, անկաշկանդ սիրով  
 Ազատ հեռվում —  
 Յերազներում...

## Մ Ի Կ Ա Յ Ի Լ Մ Ե Ղ Ի Ր

Մի գլուզացի իրենց գլուզում  
 Սանութ սարքել, բան եր ծախում:  
 Որվան մի որ մոտիկ գլուզից,  
 Մահակն ուսին, շունն չեակից  
 Ներս ե մընում մի զրո չորան.

— Բարի որ քեզ, այ խանութպան,

Մեզըը շունեն,

Մի քիչ տաս մեզ:

— Ունեմ, ունեմ, չորան ախպեր.

Ամանդ ուր ե, ամանըդ բեր,

Ինչ տեղից վոր ինքդ կուզես,

Ես սընաթին քաշեմ տամ քեզ:

Եսպես հանգիստ,

Եսպես սիրով,

Մեզրից անուշ

Կով խոսքերով

Մեզր են քաշում. մին ել հանկարծ

Մի կաթ մեզըը ծորում ե ցած:

— Տը՛զդ, են կողմից մի ճանճ գալի,

Ես կաթիլին վեր ե գալի:

Ճանճի վըրա, թաքուն-թաքուն,

Ես խանութի տիրոջ կատուն

Դուրս ե ցատկում,

Թաթով զարկում...

Բայց հենց կատվի ցատկելու հետ  
 Հովվի շունը իսկուզն ե լեթ

Հնֆ ե անում,

Վեր ե կենում,

Խեղճ փխսիկին

Դընում տակին

Ձեռաց խեղդում

Ու շրայըրտում:

«Սեղդեց, խեղդեց, վնչ, իմ կատուն.

Այ սատկես դու, շան վորդու շուն»,

Բարկանում ե խանութպանը

Ու ձեռն ընկած մոտիկ բանը

Տուր՝ թե կըստաս շան ճակատին,

Շուռ ե տալի կատվի կողքին:

— Վնչ, ձեզ մատանդ, տալան շունըս,

Իմ ապրուստը՛, տեղը՛ս, տունը՛ս...

Տունըդ քանդվի, այ խանութպան,

Անխիղճ, լերբ, չար, ֆըլան, ֆըստան,

Վճնց թե դու իմ շանը զարկես,

Դե, զարկելը հիմի դու անես...

Գոռում ե մեր աժդահակը,

Մեծագլուխ իր մահակը

Ցեռ ե տանում ու ցած բերում,

Սանութպանին շեմքում փրոռում:

— Ըսպանեցին... հայ, ոգնութլուն...

Ու թաղից թաղ, ու տանից տուն

Ձեն ե տալի մեկը մյուսին.

— Հե՛, ոգնութլուն... ըսպանեցին...

Վերի թաղից, ներքի թաղից,  
Ճամփի վրրից, գործի տեղից,  
Ճիչով, լալով,  
Հարազ տարով —  
Ել հերն ու մեր,  
Քեր ու ախպեր,  
Կին, երեխեք,  
Ընկեր արզեք,  
Ջոքանչ, աներ,  
Քաւոր, սանհեր,  
Քեռի, փեսա...

Ինչ իմանաս ել՝ ո՛վ ե սա,  
Գալիս են ու անվերջ գալիս,  
Ով գալիս է՝ տուր թե տալիս.  
— Տո՛ւ, կոպիտ արջ, տո՛ւ, վալրենի,  
Ես տեսակ ել բան կըլինի.  
Դու առուտուր չեկար անես,  
Թե՛ իր շեմքում մարդ ըսպանես...»

Մին ասում են — տասը զարկում,  
Աղցան անում, մեջտեղ ձըգում,  
Իր շան կողքին չերկար ու մեկ:  
— Դե, ձեր մեռելն չեկեք տարեք:  
Ու եստեղից բոթը գընում,  
Դընում մոտիկ գյուղն ե համում.  
— Հե՛յ, ոգնեցեք,  
Մեռած հո չեք,  
Ըսպանեցին մեր գյուղացուն...

Ինչպես շընաճանճի մի բուն  
Քանդես, թողնես,  
Են ճանճի պես

Ամբողջ գյուղով որդու կապում,  
«Բո՛ւհ» են անում, դուրս են թափում  
Ամեն մինը առած մի բան.

Վորը ձեռին մի հրացան,  
Վորը չեղան, ցաքատ կամ սուր,  
Վորը թի, բահ, վորը շամփուր,  
Վորը կացնով, վորը փետով,  
Վորը ձիով, վորը վոտով,  
Վորն անգըտակ, վորը բորիկ —  
Դեպի դուշման գյուղը մոտիկ:  
— Տո՛ւ, եսպես ել անիրավ գյո՛ւղ:  
Վոչ խիղճ ունեն, վոչ ահ-չերկցուղ.  
Մարդ գընում ե առուտուրի  
Հավաքվում են քաշում սըրի:  
Թո՛ւ ձեր դեղին, միջի մարդին,  
Ձեր նամուսին, ձեր աղաթին...  
Գնանք, զարկենք...  
Ձարդենք, կրակենք...  
— Հա՛յ, հո՛ւյ, առա՛ջ, դե՛, ձեղ տեսնեմ...

Ու դուրս չեկան իրարու դեմ:  
Հն զարկեցին ու զարկեցին,  
Կոտորեցին, կըրակեցին.  
Ինչքան ավել կոտորեցին,  
Ենքան ավել կատաղեցին,  
Ձարդեցին իրար,  
Ձընջեցին իրար,

Կորան, գընացին  
Գետնին հավասար:

Դու մի ասիլ մեկը մեկից  
Եսքան մտտիկ, սահմանակից  
Ես գլուցեքը հարկ են տալի  
Ամեն մինը մի արքայի:  
Մի տերութւան թագավորը,  
Յերբ լսում ե ես բոլորը,  
Արձակում ե հըրովարտակ  
ժողովըրդին իր հըպատակ:  
— Հայտնի լինի մեր տերութւան,  
Զինվոր, բանվոր, ազնւական —

Ամեն շարքին

— Ու աշխարհքին,

Վոր անորեն ու դավաճան  
Մեր գրացի ազգը դաժան,  
Յերբ մենք քընամ ելինք սիրով,  
Մեր սահմանը մըտով գոռով,  
Ու կոտորեց սուրը ձեռին  
Մեր սիրելի դավակնեքին:  
Արդ, սըրահար ու հըրակեղ  
Մեր վորդիքը կանչում են մեզ,  
Յեվ մենք, բնդդեմ մեր իսկ կամքին,  
Պատվեր տըվինք մեր բանակին,  
Թընդանոթով մեր ավերող  
Ու Աստուծով մեծակարող,  
Հանուն արդար ու սուրբ վոխի  
Մըանի հողը մեր վոստիսի:

Մյուսը նույնպես իրեն հերթին  
Գըրեց գորքին, ժողովըրդին.  
— Մարդկանց առաջ և Աստուծու,  
Բողոքում ենք մեր դըրացու  
Վարմունքի դեմ և՛ չար, և՛ նենգ,  
Վոր՝ վոտքելով ամեն որենք,  
Բորբոքում ե կռիվ ու վեճ  
Հին հարևան ազգերի մեջ,  
Քանդում սիրո դաշը կապած:  
Արդ՝ ալիամա մենք ըստիպված,  
Հանուն պատվի, արդարութւան,  
Հանուն թափված անմեղ արլան,  
Հանուն ազատ մեր աշխարհքի,  
Հանուն Աստուծու և իր փառքի —  
Բարձրացնում ենք մեր ձայնն ահա  
Ու մեր սուրը նորա վըրա:

Ու ըսկսեց կըռիֆն ահեղ,  
Շոխնդ, վորոտ եստեղ, ենտեղ,  
Կըրակն ընկավ շեն ու քաղաք,  
Արլուն, ավեր, ճիչ, աղաղակ,  
Ամեն կողմից սարսափ ու բոթ,  
Ամեն կողմից մեռելի հոտ...

Ամառ, ձըմեռ,

Վողջ տարիներ

Մըշակն անբան,

Դաշտերն անցան,

Ու, կըռիվը չըդադարած,  
Սովը լեկավ համատարած:

Սովը լեկավ — սովի հետ ցավ,  
Ծաղկած լերկերն ամայացավ...  
Իսկ մնացած մարդիկ լրար  
Հարցնում էին սարսափահար,  
Թե վճրտեղից արդյոք ծաղեց  
Ես ընդհանուր աղետը մեծ:

1909 փետրվար  
Մեծելի բանոււմ

ՀՈՎՀ. ԲՈՒՄԱՆՅԱՆ

ԼԵԳԵՆԴՆԵՐ  
ՅԵՎ  
ԲԱԼԼԱԳՆԵՐ

Պատ. Խմբագիր՝ Յե. Չարսնց  
Նյութերը տպագրութեան համար պատրաստեց Նվարդ Թումանյան  
Յան. Խմբագիր՝ Տ. Խաչվանքյան  
Սրբապիշներ՝ Սոս Լակոբյան, Վ. Մանուկյան

Հրատար. № 2750. Գրավիր № 8313(բ),  
տպագիր № 2089, տիրած 5000. Պե-  
տատար տպարան, ստ. ֆ. 6 72×105, մեկ  
առդ. թերթում 102.40 տպ. նգ. հանձնված  
և արտադրութեան 5/X 1933 թ. ստորա-  
գրված և տպագրութեան 14/II 1934 թ.

## ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

### I

Փամանակով կատուն ձոն եր,  
Շունն ել գըլխին գըղակ չուներ,  
Միայն, գիտեմ վոչ՝ վորդիանց վորդի  
Ճանկել եր մի գառան մորթի:  
Յեկալի մի որ, ձմեռվան մըտին,  
Կատվի կուշար տարավ մորթին:

— Բնրաջողում, ուստա Փիտո,  
Գլուխըս մըրսեց, ի սեր Ասոո,  
Առ ես մորթին ու ինձ համար  
Մի գղակ կարի գըլխիս հարմար:  
Վարձիդ համար միամիտ մընն,  
Համա, համա շատ չուշանա:

— Աչքիս վըրա, քեռի Բուչի,  
Մի գըղակ ա, հո մի քուրք չի.  
Բու թանկագին խաթեր համար  
Ուրբաթ որը համեցեք սար:  
Փողի մասին ավելնորդ ա,  
Մեր մեջ խոսան ել ամոթ ա.  
Ի՞նչ մեծ քան ա, տո՛ հեր որհնած,  
Միայն, միայն մի գղակի վարձ:

Ուրբաթ որը քեռի Բուչին՝  
 Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին  
 Թափ-թափ տարով՝ ծանդըր ու մեծ,  
 Ուստա կաավի շեմքում կանգնեց:  
 — Ուստեն ուր ա... փափախս ուր ա...  
 — Մի քիչ կնցի, հրես կերևա:»

## II

Ուստեն լեկավ քուրքը հառին,  
 Շանը տեսավ, բեղի տակին  
 Իրեն-իրեն քիչ փընթփընթաց,  
 Ու մուշտարու վըրա թընդաց.  
 — Ցուրտը տարանով... վա՛ն տընաշեն,  
 Չես թող անում մի շունչ քաշեն.  
 Հեշտ բան հո չի, հըլա նոր եմ  
 Ցըրցամ տըվել, թե վոր կարեն:  
 — Դե հեր որհնած, ետենց ասա,  
 Եդ բարկանանլը ել ընչիս ա:  
 Փող եմ տըվել, շուտով կարի,  
 Թե չե՛ ասա եզուց արի:  
 Համ ասում ես, համ չես կարում,  
 Համ խոսում ես, վըրես դոտում,  
 Համ, համ, համ, համ,  
 Բանի, ախպեր, գընամ ու դամ...  
 Ասավ Բուչին ու նեղացած  
 Վերադարձավ գըրուխը բաց:

## III

Մին ել լեկավ, դարձյալ չը կար.  
 Ես անգամը դիպան իրար.

Ել անպատիվ, անկարգ խոսքեր,  
 Ել հին ու նոր, ել հերն ու մեր,  
 Ել գող Փխս՛, ել քաշալ Շո՛ւն...  
 Բանը հասավ դիվանբաշուն:  
 Շունը մինչև գնաց, լեկավ,  
 Ուստա կատուն կոտըրն ընկավ,  
 Գըլուխն առավ ու մի գիշեր  
 Հնչեց կորավ, ես կորչիլն եր...

## IV

Են որվանից մինչև որս ել  
 Շունն ես բանը չի մոռացել,  
 Մտքում հըլա դեռ պահում ա.  
 Վորտեղ կատվին պատահում ա,  
 Վեր ա թըռչում, վըրա վազում,  
 Իրեն մորթին լեա ա ուզում.  
 Իսկ սևերես կատուն հանկարծ  
 Ցես ա դառնում ու բարկացած  
 Փըշտացնում ա. մըթամ նոր եմ  
 Ցըրցամ տըվել, թե վոր կարեն:

1886



## ԱՆԲԱՒՏ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Մի որ ՉըղՂիկն ու Ճաջն չեկան  
 Թե՛ չեկ դառնանք վաճառական:  
 Ասին ու խելք խելքի տըվին,  
 Հավան կացան, պայման դըրին.  
 Բայց՝ արի տես... վոր փող չուենն.  
 Շատ միտք արին, թե ինչ անեն.  
 Վերջը չեկան Փըշի մտաը,  
 Ընկան նըրա ձեռն ու վտաը,  
 Ու մուրհակով,  
 Շահով, կարգով,  
 Փող վեր առան բավականին,  
 Ինչքան պետք եր իրենց բանին:  
 ՉիղՂը մընաց, տընպան դառավ,  
 Ճաջը բոլոր փողերն առավ,  
 Առավ, նստեց նավի միջին,  
 Հասավ Մըսըր, Չինուճաչին,  
 Փարս, Հընդըստան,  
 Արաբըստան...  
 Ե՛լ թանկագին քիրմանի շաբ,  
 Ե՛լ մարդարիտ, զըմբուխտ ու լալ,  
 Հընդու խուրմա, փըստա, բաղամ,  
 Յեվ... վճը մեկի անուներ տամ.  
 Ինչ վոր տեսավ, աչքը սիրեց,  
 Առատ-առատ նավը լցրեց:  
 Նավը լցրեց հազար բարով  
 Ու չեա՛ չեկած ճանապարհով  
 Ուրախ-ուրախ առն էր գալիս:

Ճամփին ծովում սարսափելի  
 Արեկոծում, մորիկ չեղավ,  
 Չարկեց, տարավ ապրանք ու նավ,  
 Միայն սովաքաբ Ճաջը ենոր:  
 Աղաովեցավ մերկ ու տըկըր:  
 Աղաովեցավ՝ փառք իր Ածուռ.  
 Բայց ի՞նչ սըրտով խեղճը դա տուն.  
 Գո՛ւ — ի՞նչ սախ պարտքատերին,  
 Վճնց չերեա իր ընկերին...  
 Ընկերն ենտեղ՝ դուռը կըտրած,  
 Աչքը ճամփին, վիզը ծըռած,  
 Համբուռ. ե որն որի վըրա,  
 Թե՛ մեր Ճաջը չերբ պիտի դա...  
 Յերկար նայեց,  
 Ճամփին պահեց,  
 Շատ լավ ու վատ չերազ տեսավ,  
 Մինչև պարտքի որը հասավ,  
 Ու՛ մուրհակի թուղթը ձեռին,  
 Փուշը տընկվեց կըտեր ծերին.  
 — Ե՛լ բարեկամ, ի՞նչ բանի չեք.  
 Ել չեք ստում, թե պարտք ունեք...  
 Գործ բըռնեցիք, հորս ողորմի,  
 Յեա տվեք դե փողս հիմի:  
 Թուղթ եք տվե՛լ վախտ իմացեք,  
 Ամոթ, աքուռ, ա՛ն ունեցեք...  
 Թարան հո չի... մեղք եմ չես ել...  
 Ախպեր, եսպես բան եք տեսնը  
 Վոսկի տա մարդ իրեն ձեռով,  
 Չը կարենա առնի դոռով...  
 Մրանից հետո դե արի դու.

Ու ձեռ մեկնի աղքատ մարդու...»  
 Գորգոռում եր վողջ թառակում,  
 Հայհոյում եր, խայտառակում.  
 Ամեն մարդ ել, ով վոր լրսում,  
 Հենց մի բերան են եր ասում.  
 — Այ ամոթ ձեզ, Չրդլիկ ու ծայ,  
 Ի՞նչ ենք լրսում. — վայ, վայ, վայ, վայ—  
 Անուններըդ վաճառական  
 Ու ես տեսակ խայտառակ բան...  
 Վայ, վայ, վայ, վայ,  
 Չրդլիկ ու ծայ...»  
 Չրդլիկն հասկես միշտ լրսելիս  
 Մերաը բերնով դուրս եր դալիս:  
 Բարկանում եր իրեն մըտքում,  
 Անիծում եր, չըքում, թըքում.  
 — Այ քու տունը քանդվի, ա՛ ծայ,  
 Այ դու դառնաս զըրողի փայ,  
 Ես ի՞նչ բան եր, վոր դու արիք,  
 Գըլիսես ես ի՞նչ փորձանք բերիք...»  
 Ու խընդրում եր ամեն անգամ.  
 — Մի նեղանա, Փուշ բարեկամ,  
 Շատ ես կացել,  
 Կանց մի քիչ ել.  
 Թուղթ ըստացա չերեկ ծայից,  
 Թե դուրս չեկա Արարիայից.  
 Վորտեղ վոր ե՛ շուտով կըգա,  
 Իեռ մի բան ել ավել կըտա...»  
 — Յես չեմ ուզում ավելն, ախպեր,  
 Կանխիկ համրած իմ փողը բեր.  
 Շահ եք զըրել,

Վախտ եք զըրել.  
 Ինչ գըրած ա, են եմ ասում,  
 Չեզնից ավել բան չեմ ուզում:»  
 — Չե, աղա Փուշ,  
 Թե վաղ, թե ուշ,  
 Փողն իր կարգին, շահն իր կարգին,  
 Իսկ պատիվըդ... չես իմ հողին...  
 Յես հույս ունեմ... ասենք պարտք ենք...  
 Բայց չե՛ ախար մենք ել մարդ ենք...  
 Չե, քու արածն ով մոռանա,  
 Իր Աստվածն ել նա կուրանա...»  
 Խեղճը հասկես լեզու ածավ,  
 Շատ հույս տըվավ, շատ խոստացավ,  
 Շատ սուտ ասավ պարտքատերին,  
 Շատ ըսպասեց իր ընկերին.  
 Բայց ընկերը չըկա՛, չըկա՛:  
 — Ես ի՞նչ ցավ եր, Աստված վըկա.  
 Ի՞նչ իմ բանն եր՝ մըտա մեջը,  
 Վոր խայտառակ լինեմ վըրջը...  
 Ի՞նչպես պըրծնեմ ես կըբակից,  
 Ես ահագին պարտքի տակից.  
 Ել ի՞նչ ասեմ,  
 Վհնց ըսպասեմ.  
 Ես լե՛րը կը գա, ի՞նչ իմանամ,  
 Վժը շուրն ընկնեմ... ո՛ւմ մոտ գնամ...»  
 Շատ միտք արավ,  
 Իեռ դեն թըռավ,  
 Ինչ վոր ուներ տանը, հագին,  
 Վողջ հավաքեց, տըվավ պարտքին,  
 Յիսի մերկացավ,

Եւ չը պրծալ:

Վերջը տեսալ, վոր ճար չեղալ,  
Թևեր առալ, ինքն ել փախալ,  
Փախալ, կորալ, վոր ել ենպես  
Դատարի, սընանկ ու սևերես  
Վոչ պատահի պարտքատերին,  
Վոչ չերևա լույս աշխարհին:

Անուհետև իր նամուսից  
Չըղջիկը՝ մերկ, փախած լուսից,  
Ցերեկները դես դեն թագչում,  
Գիշերն է միշտ մըթնում թըռչում,  
Վոր չերևա իր թայ-թուշին,  
Վոչ պարտքատեր աղա Փուշին:

Ճաշն ել ծովում,  
Ճըչում, ծըվում,  
Ձուրն է մըանում,  
Դուրս է պըրծնում,  
Թևին տալիս,  
Ման է գալիս,  
Թե մի գուցե բախար բանի,  
Կորուստն ել չեա ջրից հանի:  
Իսկ Փուշն արդեն հուլար հատած,  
Ճանկ ու ատամ սուր պատրաստած,  
Կողքովն ոլ վոր անց է կենում  
Բաշում է փեշն ու հարցընում,  
Թե չեն տեսել մեկն ու մեկին,  
Են վերը Ճալին կամ Չըղջիկին:  
Ու են որից մինչև որս ել  
Մեկը մեկին դեռ չեն տեսել:

## ԱՆԻԾԱԾ ՀԱՐՍԸ

Վաղ ժամանակ մի հայ շենում  
Մի հարզևոր հարսն է լինում:  
Նըբա բերնից կեսուր-կեսառ  
Չեյին լըսել մի շունչ, մի բառ,  
Չեյին տեսել շուրթը մի որ...  
Եսպես խոնարհ ու հարզևոր:  
Մի որ մեհնակ ողում նըստած,  
Իր ճոխ մազերն արծակ թափած,  
Ազաա, անփուլթ սանրում, հյուսում,  
Հետն ել ձենով չերգ էր ասում:  
«Աշխարհքը բանա,  
Մեջը անբախա  
Ցեա մի գերի անխընդում.  
Միրուն շորեր,  
Չահիլ որեր  
Ի՛նչ եմ անում ևս բանասում:  
Երնեկ ծըտին,  
Ճլուղքի միջին  
Ծըլլըլում է, թըրթըսում,  
Թըռչում՝ սիրած  
Ընկերն առած,  
Ազատ, կանանչ արտերսում:  
Ախ, սև ըլի,  
Չըքվի, փըլի  
Ծընված որը աղջկա,  
Ցավ ու խընդում  
Փակված սըրտում,

Ծիծաղ չը կա, «ախ» չը կա...»  
 Մին ել հանկարծ բացվեց դուռը,  
 Ու ներս մըտավ ծեր կեսուրը:  
 — Հո՛, պո՛, պո՛, պո՛, կանչեց խեղճը,  
 Գետին պատուխ, մըտնեմ մեջը...  
 — Հոպոպ դառնաս,  
 Անամոթ հարս:  
 Մի տես, մի տես,  
 Թե լըբբի պես  
 Գըլուխը բաց,  
 Ազատ նըստած՝  
 Վե՛նց ե կանչում,  
 Չի ամանչում...  
 Լեզուդ լալիլի,  
 Մազըդ թաղքի,  
 Գըլխիդ կըպչի  
 Մանրը միջի:  
 Ասավ-չասավ,  
 Մին ել տեսավ՝  
 Մանրը գըլխին  
 Հարսն առաջին  
 Հոպոպ դառավ,  
 Յերդկից թըռավ,  
 Ու վերացավ,  
 Վեր, հեռացավ:

Են եր ու են.  
 Խեղճն են որեն  
 Հանդերն ընկած՝  
 Հոպոպ մընաց.

Միշտ ել են հին  
 Մանրը գըլխին,  
 Չալիկ-մալիկ,  
 Լեզուն լալիկ,  
 Անխոս ու լուս,  
 Մոլոր, տըխուր:

Բացց չերը հանկարծ  
 Միտն ե դալիս,  
 Վոր գլխաբաց  
 Յերգ ասելիս՝  
 Իր կեսուրը  
 Բացեց դուռը,  
 Վեր ե թըռչում  
 Սըրտատըրոփ  
 Ու դեռ ճըչում.  
 — Հո-պոպ... Հո-պոպ...

1898

## ԱՐԾԻՎՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Յեղափ՛ մի անգամ անտառի միջին  
 Արծիփն ու Կաղնին եսպես վիճեցին,  
 Թե վերն իրենցից շատ տարի կապրի,  
 Վերն ե զիմացկուն ու պինդ ավելի:  
 Արծիփն ասավ՝ յես, Կաղնին ել թե՛ յես:  
 Յերկունս ել համառ ու հրապարտ եսպես՝  
 Մեծ-մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,  
 Վերջը ես տեսակ պայման կապեցին:  
 Ժամանակ գրբին հինգ հարյուր տարի  
 Արքան հավքերի, արքան անտառի,  
 Վոր թե վորոշած են որին հասնեն,  
 Են որը մին ել զան իրար տեսնեն:  
 Ու Արծիփն իսկուչն Կաղնուց հեռացավ,  
 Հըզոր թեկերը շարժեց, վերացավ  
 Դեպի ամպերը, դեպի ժայռերը,  
 Ուր անց ե կացնում իր լավ որերը:  
 Կաղնին ել ժրոեց ճշուզերն արմատի,  
 Ու ենպես հուժկու կանգնեց անտառում,  
 Վոր վաչր չընկնի ել հինգ հարյուր տարում:  
 Դարեր անց կացան: Յեկ անա մի որ  
 Արծիվը յեկավ ծերացած, անզոր,  
 Ծըվոցը կըտրած, տըկար, հեալով,  
 Թուլ-թուլ թեկերը հազիվ քարշ տարով  
 Տեղ հասավ մի կերպ, նախեց դեռ ու դեն,  
 Տեսավ, վոր Կաղնին ընկել եր արդեն.  
 Ճշուզերը թեկ դեռ թարմ ու կանաչ,  
 Ընկել եր անեղ փոթորկի առաջ:

— Հեյ, կանչեց. գոռոզ, պարծենկոտ Կաղնի,  
 Դե լավ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.  
 Հինգ հարյուր տարուց մի ժամ ել դեռ կա,  
 Ընկել ես արդեն, անկտորում հըսկա:  
 — Հինգ հարյուր տարի ապրել եմ կանգնած,  
 Եդքան ել կապրեմ դեռ եսպես թեք ընկած,  
 Մինչև լըրանա մի հազար տարին.  
 Պատասխան տրվավ ընկած վիթխարին:

1898

## Հ Ս Կ Ա Ն

ԿՈՎԿԱՍԻ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻՑ

(ՀՍՏՎԱԾ)

Լավ չեմ հիշում թե վոր դարում,  
 Հին ժամանակ, մեր աշխարհում  
 Ասում են թե՛ կար մի իշխան.  
 Մի մեծ իշխան ենքան ուժեղ,  
 Վոր թե մարդիկ նըրա աչքում՝  
 Թե հասարակ ձանձ ու մըժեղ:  
 Ինչ վոր աներ ու կամենար,  
 Որենք էր են լերկերի համար.  
 Ո՞վ էր գըլխից ձեռ վեր կալած,  
 Ո՞վ դուրս կը գար նըրա զիմաց:  
 Ուներ անթիվ ու անքանակ  
 Վոչխարի հոտ, մարդի բանակ,  
 Կովի նախիր, խողի բոլուկ,  
 Յերամակներ ձիու, շորու,  
 Ես բոլորը ցըրված, փըռված  
 Մինչև ծովի ափը հեռու:  
 Մինչև ուր վոր քըշեր, տաներ,  
 Իր աշխարքի սահմանն են էր.  
 Ո՞վ էր գըլխից ձեռ վեր կալած,  
 Ո՞վ դուրս կը գար նըրա զիմաց:  
 Մի անգամ էլ էս իշխանը  
 Յերը նըստած էր Կրեն տանը,  
 Լեղապատառ ներս ընկավ տուն,  
 Իր հոտերի վերակացուն.

— Ապրած կենաս, մեր տեր իշխան,  
 Հապս հապս հրաշք մի բան.  
 Արածում էր ծովի ափին  
 Բազմութունը քու հոտերի,  
 Մին էլ տեսնենք՝ ծովի միջին  
 Մի վիթխարի մարդ է գալի:  
 Մի վիթխարի մարդ էմ ասում,  
 Վոր մենք իր մոտ լու յենք չընչին.  
 Ծովը մինչև ծունկն է հասնում,  
 Իսկ գըլուխը ամպի միջին:  
 Յեկավ, կանգնեց մեր հանդիման  
 Ու վորտաց ամպի նըման.  
 «Ո՞վ է, ասավ, հապս բերում  
 Թողնում ապրանքն իմ հանդերում.  
 Կորեք իսկույն, դուք մարդուկներ,  
 Ձեռքս քանի չի հասել դեռ...»  
 Են ժամանակ վեր կացա լես  
 Ու պատասխան տըվի հապս.  
 «Եղ սեակնած, մութ ամպերում  
 Ձուր էս եղքան բարձըր գոռում.  
 Ով էլ լինես, ուսկից էլ գաս,  
 Ես մի բանը լավ իմանաս,  
 Դու, չերկնահաս, ահեղ հըսկա,  
 Մեծ իշխանի ապրանքն է սա.  
 Ո՞վ է գըլխից ձեռ վեր կալած,  
 Ո՞վ դուրս կը գա նըրա զիմաց:»  
 Բաց ինձ իսկի չը լսեց էլ  
 Են անձոռնի աժդահակը,  
 Են ամպերից ցած կըռացավ,  
 Ձեռը կոխեց ծովի տակը,

Դուրս հանեց մի ձուկն ահագին  
 Ու դեմ արավ արեգակին,  
 Վոր խորովի...» — Հագիվ եսքան  
 Պատմեց հովիթն իշխանական  
 Ու վեր ընկավ շունչը փչեց:  
 Խիստ զայրացավ իշխանը մեծ.  
 — Ո՞վ ե, ասավ, համարձակվել  
 Իմ տերութեան սահմանն չեկել  
 Ու եղպես ել վրբես հաչում...  
 Ինձնից ուժեղ չեմ ճանաչում  
 Յես վոչ մի տեղ ու վոչ մեկին...»  
 Եսպես ասավ ու զայրագին  
 Հըրամացեց՝ գորքերը դան:  
 Հըրամացեց՝ գորքերն լեկան.  
 — Կեցցե մեր տեր, մեր թագավոր,  
 Անհաղթ, անմահ, ամենազոր...  
 — Ապրեք, ասավ իշխանը սեպ,  
 Յեխք խկուզն ու գընացեք,  
 Մանուկ ու ծեր  
 Իմ առյուծներ,  
 Ո՞վ ե, տեսեք, վրբես հաչում  
 Ու իմ ուժը չի ճանաչում:  
 Տուլց տըվեք դուք, վոր վոչ մի աեպ  
 Չը կա վոչ վոք ինձնից ուժեղ...»  
 Ասավ գորքերն իրենց կարգին  
 Փող փըչեցին, թմբուկ զարկին,  
 Շըրըխկոցով, զըրընգոցով  
 Ճամփա ընկան դեպի մեծ ծով:  
 Հասան, տեսան — աչքեզ հըսկա,  
 Գըլուխն եստեղ, վտաներ չըկա.

Գընա՛, գընա՛, թե վոր գըտնես...  
 Յերկար ու մին ձըգված եսպես,  
 Հըսկաչական քընով քընած:  
 Եստեղ, եստեղ դիրքեր բըռնած՝  
 Իես չոքեցին, դեն պառկեցին,  
 Հա՛ զարկեցին ու զարկեցին.  
 Տեսան տեղից ժաժ չի գալի,  
 Խըռքմփում ե զարնուրելի,  
 Խըռքմփոցից, ինչ վոր խոսում,  
 Մարդիկ իրար ձեն չեն լսում:  
 Մոտ գընացին, ելլ՛, ելլ՛...  
 Իարձյալ տեղից ժաժ չի գալի:  
 Կամաց կամաց սիրտ առնելով,  
 Գուգոտալով, հարաչ տալով,  
 Դուրս թափվեցին թագուսաներից,  
 Յեքան վըրեն, դեսից, դենից,  
 Վորը վտաին,  
 Վորը քըթին,  
 Վորը լանջին,  
 Վորն ահանջին,  
 Փորի վըրա, միրքի միջում,  
 Չի չեն քըշում, նիզակ ճոճում,  
 Չարկում, զարկում,  
 Չըգում, թըքում,  
 Հաչոցում են եսպես, եսպես...  
 Մին ել հըսկան են սարի պես  
 Վըրա նստեց մեծ, ահարկու.  
 Ինչ պատահեց՝ վոչ տեսնես դու,  
 Հագարնիրով մարզն ու իր ձին  
 Ֆակոթն լեղան կոտորվեցին.

Վորն ել գըլխից, քըթից, լանջից,  
կամ ուսերից, կամ ահանջից  
Ներքև ընկավ — թե մարդ, թե ձի,  
Նըրա որն ել դու իմացի:

Շատ զարմացավ հըրեղ-հըսկան,  
Թե, Տեր Աստված, արդյոք եսքան  
Մանրը-մուռըր ի՞նչ բաներ են  
Վոր չեկել են թափվել վըրեն:  
Տեսավ, ինչ վոր կենդանի կան  
Վազ են տալի թե չեա գնան.  
Բուռն արավ իր բըռնովը մեծ,  
Իրար խառնեց, վողջ հավաքեց,  
Գըրպանն ածավ  
Ու վեր կացավ,

Լընգընդալեն իրիկուռը  
Գընաց հասավ իրենց տուռը:  
Տանը իր պես մեծ, ահադին  
Մի մեր ուներ, բարի մի կին:  
Գընաց հսկա մորը պատմեց  
Թե իրեն հեա ինչ պատահեց,  
Ու գըրպանից հանեց բոլոր՝  
Ահից խելառ ձին-ձիավոր:  
Բարի կինը հենց վոր տեսավ,  
— Աման, վորդի, վա՛յ ինձ, տսավ.  
Խնչ ես անու՛մ եդ խեղճերին,  
Բա չե՞ս տեսնու՛մ, թե քու ձեռին  
Վոնց են դողու՛մ: Ասենք մեծ ես,  
Միթե պիտի փոքրին տանջես:  
Մեծ թե փոքրը, ինչ ել լինի,  
Ամեն ապրող շուռնչ կենդանի,

Վոր. ծնվել ե արևի տակ,  
Ես աշխարհքում միատեսակ,  
Մինը պակաս, մյուսը ավել,  
Վողջ ել գլխեն խընդալ, ցավել,  
Չը պարծենա լերքեք վո՛չ վոք,  
Թե ինքն անհաղթ մի բան ե ջոկ.  
Միշտ ուժեղից ուժեղը կա,  
Իսկ ամենից ուժեղը՝ մահ...  
Բաց թող, վորդիս,  
Բաց թող՝ գընան,  
Ապրեն ազատ  
Ուր կամենան:

1908



## Չ Ա Ր Ի Վ Ե Ր Ջ Ը

Կինում ե մի սար,  
Են սարում մի ծառ,  
Են ծառում փրչակ,  
Փրչակում մի բուն,  
Բընում լերեք ձագ,  
Ու վըրեն Կըկուն:

— Կուկու, կուկու, իմ կուկունեք,  
Յէրբ պիտի դուք առնեք թևեր,  
Քըռչեք, գընաք,  
Ուրախանաք...

Յերբում եր մարիկ Կըկուն.  
Մին էլ, բհբ', Աղվեսն չեկավ.

— Ես սարը իմն ե,  
Ես ծառը իմն ե,  
Ծառում փրչակ կա,  
Փրչակում մի բուն,  
Ես ո՛վ ե լեկել  
Տիրացել թագուն:

Ախ դու Կըկու, հիմար Կըկու,  
Քանթ փոքրիկ ձագ ունես դու:

— Յերեք հաս ձագ, ադա Աղվես:  
— Յերեք հաս ձագ ցուց կը տամ քեզ:  
Ու չես ասել, դու, սնամոթ,  
Մինը ծառա զըրկես ինձ մոտ:  
Չըգի շուտով մի հաար ցած,  
Թե չե կացինս Կըրեն սըրած,

Գընամ բերեմ,  
Ծառը կըտրեմ...  
— Վա՛յ, չը կտրես,  
Ասաված սիրես,  
Ես մինն ահպ  
Տար քեզ ծառա,  
Միայն թե եղպես  
Մի շընջիլ մեզ  
Բընով տեղով,  
Ամբողջ ցեղով:

Խնդրեց մարիկ Կըկուն ու ձագերից մինը  
ձըգեց ներքե: Աղվեսը հանի, առավ գնաց:

— Վա՛յ-վա՛յ, դու-դու,  
Իմ լավ կուկու.  
Վճր սե սարում,  
Վճր անտառում,  
Վճր թըփի տակ  
Կորար մենակ...  
Վա՛յ-վա՛յ, դու-դու,  
Իմ խեղճ կուկու...

Լաց եր լինում մարիկ Կըկուն, մին էլ, բհբ'  
Աղվեսը չեա չեկավ:

— Ես սարը իմն ե,  
Ես ծառը իմն ե,  
Ծառում փրչակ կա,  
Փրչակում մի բուն,  
Ես ո՛վ ե լեկել  
Տիրացել թագուն:

Ախ, դու Կըկու հիմար Կըկու,  
Քանթ փոքրիկ ձագ ունես դու:

— Յերկու հատ ձագ, աղա Աղվես:  
 — Յերկու հատ ձագ ցույց կը տամ քեզ:  
 Ախ, չարամիտ դու ավաղակ,  
 Ի՞նչ խաբար ե, յերկու հատ ձագ.  
 Ի՞նչ, ուզում ես եստեղ գոռով  
 Լըցնես ամբողջ կըկուներով...  
 Ձրգի շուտով մի հատը ցած,  
 Թե չե կացինս հըրեն սըրած,

Գնամ բերեմ,  
 Ծառը կըտրեմ...  
 — Վա՛յ, չը կտրես,  
 Աստված սիրես,  
 Ես ել առ տանր,  
 Ու թող դադար՝  
 Վերջինը զեթ  
 Մընա ինձ հետ...

Աղաչեց մարդիկ Կըկուեն ու յերկրորդ ձագն  
 ել ձգեց ներքե: Աղվեսը հանի, ես ել առավ ու  
 գնաց:

— Վա՛յ-վա՛յ, վու՛յ-վո՛ւյ,  
 Ընչի համար  
 Յեկա ես սար,  
 Բուն շինեցի  
 Ձագ հանեցի...  
 Աղվեսն չեկավ,  
 Տարավ կերավ,  
 Յերկու, յերկու,  
 Կուկու... կուկու...

Լոց կը լինում մարդիկ Կըկուեն:  
 Ես միջոցին — դա՛, դա՛, դա՛, Ազոաջն անց  
 կը կենում են կողմերով: Լըսեց Կըկուի լացի  
 ձայնը:

— Եղպես տխուր ու զարհուրիկ  
 Ի՞նչ ես լալիս, Կըկու քուրիկ:  
 — Ինչպես չը լամ, ա սանամեր.  
 Աղվեսն չեկավ են սըրտամեռ,  
 Գըլխիս եսպես փորձանք բերավ,  
 Ձագուկներըս տարավ կերավ:  
 — Վա՛յ, իմ աչքին, անխելք Կըկու,  
 Ի՞նչպես իզուր խաբվել ես դու.  
 Սուտ խոսքերից չար Աղվեսի:  
 Վա՛նց թե սարը իմն ե՛ կասի:  
 Ո՞վ ե տըվել են լըրբին սար.  
 Սարն ամենքինս ե հավասար...  
 Ո՞վ կը թողնի վեր կենա նա  
 Ամբողջ սարին գա տիրանա,  
 Անունը տա սըրած կացնի,  
 Մրան, նրան սուտ վախեցնի,  
 Ու մինն հսոր, մյուսը յերեկ,  
 Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...  
 Սև գրողի են տարածին  
 Ո՞վ ե տվել սըրած կացին:  
 Մին ել վոր գա ու սպառնա,  
 Մի վախենա, քըշի գնա:

Եսպես ասով Ազոաջն ու թռավ գընաց: Ահա  
 կըկին Աղվեսն չեկավ:

— Ես սարը իմն ե,  
 Ես ծառը իմն ե...

Հագիվ կը ասել, Կըկուեն բնից գլուխը հա-  
 նեց՝

— Սուտ ես ասում, դու, խաբերան,  
 Անխիղճ դազան, անկուշտ, ազահ:

Ո՛վ ե տվել եստեղ քեզ սար,  
 Սարն ամենքինս ե հավասար:  
 Ի՛նչ ես չեկել սուտ տեր դարձել,  
 Յես ել հիմար՝ ճիշտ եմ կարծել,  
 Զագուկներըս արվել եմ քեզ...  
 Կորի, գընա, դու չար Աղվես,  
 Հերիք ինչքան սուտ ես ասել,  
 Հիմի գիտեմ, չեմ վախում ել  
 Կացին շունես ծառը կըտրես:

— Ո՛վ ասավ քեզ:

— Ագոսիս ասավ:

— Ագոսիսը լավ:

Ու Ագոսիս վրա բարկացած Աղվեսը պաշք  
 քաշեց, հեռացավ: Գընաց մի դաշտում սուտ-  
 մեռնուկի ավալ, վեր ընկավ, իբրև թե սառ-  
 կել ե: Ագոսիս ել կարծեց, իբրավ սատկել ե.  
 Թռավ, չեկավ վրեն իջավ, վոր աչքերը հանի:  
 Աղվեսը հնի, հանկարծ բռնեց:

— Դա՛-դա՛, դա՛-դա՛,  
 Աղվես ադա...

— Ա՛յ դու կռավան չարալեզու,  
 Վե՛նց թե կրկուին ասել ես դու,  
 Թե չես կացին շունեմ սըրած...  
 Կացին շունեմ... դե հիմի կաց...

— Վա՛յ, քեզ մեղս,  
 Աղվես ադա,

Յես եմ ասել, չեմ ուրանում,  
 Ինձ քըքըքըրի, ինձ կեր հում-հում,  
 Տուր ինչ պատիժ սիրտըդ կուզի,  
 Բաց մի վերջին խոսքըս լսի:  
 Յես եմ սարում, հենց դեմ ու դեմ,

Եսպես մի թանկ պահուստ ունեմ,  
 Վոր չես գըտնի դու քո որում  
 Վոչ մի թառում կամ անտառում:  
 Ընչի համար եմ ահագին  
 Գանձը կորչի հողի տակին:  
 Արի գընանք, հանեմ տամ քեզ,  
 Ենքան ուտես, ենքան ուտես...  
 Թե չը լինի ու սուտ դուրս գամ,  
 Յես եո եստեղ միշտ կամ ու կամ...

— Գնանք, ասավ Աղվեսը: Թե կը լինի,  
 շատ լավ, թե չի լինի, ելի քեզ կուտեմ:

Գնացին:

Վերևից թռչելիս Ագոսիսը նկատել եր, վոր  
 մի թփում պառկած եր գլուղացու շունը: Աղ-  
 վեսին տարավ, տարավ, դուրս բերավ ուղի  
 եմ թփի վրա:

— Ա՛յ, ասեց. ես թփումս ե իմ պահուստը:

Աղվեսն ազահ վրա ընկավ թփին. շունը  
 վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին:  
 Աղվեսը խեղդվելով սկսեց խոխոտլ.

— Ա՛խ, չես... մխ, չես...

Զգու՛ր Աղվես,

Փորձանքի մեջ

Ընկնեմ եսպես...

Ա՛խ, անիրավ

Դու սե Ագոսիս...

— Ինչքան ել վոր լինիս գըտլը,  
 Զարի համար թե վաղ, թե ուշ,  
 Եդ ե պահված, Աղվես ադա.

Դա՛, դա՛, դա՛, դա՛...


Փատասխանեց Ագոսիս ու թռավ:



Են ի՞նչ լեզու կարա պատմի  
 կամ ի՞նչ բերան,  
 Չըտեսնըված, հըրաշք մի բան...  
 Հիմի եսպես՝ սոված, մենակ  
 Մընացել եմ պատերի առկ,  
 Տեղ չունեմ լես, կեր չի ճարվում:  
 Յես ել եմ հո շատ մըճըրվում.  
 Բայց ի՞նչ անեմ, ուր գընամ ել,  
 Յերեսս ելի ձեզ եմ արել:  
 Ասածու սիրուն, մի խնայեք,  
 Ես մի ձըմեռ շահեք, պահեք,  
 Մինչև նորից գարուն բացվի,  
 Աշխարհքն ել եզ բարով լըցվի:»  
 — Դե լավ, դու կաց, ներս գընամ լես,  
 Տեսնենք՝ ներսից ի՞նչ կասես քեզ:»  
 Ասավ պահնորդն ու մեջեմեջ  
 Կոկ սենյակներն անցավ անվերջ,  
 Մինչև հասավ ներսի տունը,  
 Ուր ազրում եր մեծ Մըրջյունը  
 Առատ կլանքով,  
 Իր համայնքով:  
 Գընաց իրենց լեզվով հայտնեց.  
 Մըրջյունը լուռ լրսեց, մըթնեց,  
 Ու լետ դարձավ  
 Եսպես ասավ:  
 — Գիժ Մոծակի համար եմ լես  
 Վողջ ամառը արևակեղ՝  
 Ենքան ջանքով  
 Ու տանջանքով  
 Տուն տեղ գըրել, ճամփա հարթել,

Ամբար շինել, պաշար կիտել,  
 Վոր ամառը ծուլլ պըտըտի,  
 Ձմեռը դա նըստի ուտի...  
 Մեր ծուլլերին ջարդել ենք մենք,  
 Ուրիշ ծուլլի՛ բերենք պահենք...  
 Կերթաս կասես եզ անպետքին.  
 Բանի, գործի ժամանակին  
 Ու՛ր փոխանակ աշխատելու,  
 Ուշք ու միտքը տա խընդարու,  
 Գորսապ շըրջի, լերպի, պարի,  
 Մըրա նըրա թուշն համբուրի,  
 Ես կուռ վազի, են կուռ ցատկի,  
 Վերջը եղպես պլտի սասկի:»

1916 Քոբոն



ՊԵՏԼՐԱՑԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ

№-39

№-39

ՀՈՎԷ ՔՈՒՄԱՆՅԱՆ

Յ Ե Ր Գ Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱՆԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1984

Պատ. Խմբագիր՝ Յե. Զարենց

Նյութերը տպագրութեան համար պատրաստեց Նվարդ Թովմանյան

Տեխ. Խմբագիր՝ Տ. Խաչվանքյան

Սրբագրիչներ՝ Սոս Զակոբյան, Վ. Մանուկյան

ԵՅ-ՅԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գ Ե Գ Գ Ե Ե

Հրատար. № 2751, Գլավիտ № 8314 (բ),  
պատվեր №2090, տիրած 5000. Պետ-  
հրատի տպարան, ստ. Փ. 6 72X105, մեկ  
տպ. թերթում 102.400 տպ. նշ. հանձնված  
է արտադրութեան 5|X 1933 թ. ստորա-  
գրված է տպագրութեան 20|III 1934 թ.

## Հ Ի Ն Ո Ր Շ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գանաչ, վիթխարի ընկուզենու տակ,  
Իրենց հասակի կարգով, ծալպատակ,  
Միասին բաղմած,  
Մի շըջան կաղմած,  
Քեֆ ելին անում  
Յեզ ուրախանում  
Մեր հըսկա պապերն ու մեր հայրերը՝  
Գլուզի տերերը:

Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ,  
Յերեք դասընկեր,  
Նըրանց առաջին գըլխարաց կանգնած,  
Ձեռքներըս խոնարհ սըրաներիս գըրած,  
Ձիւ, ուժեղ ձենով նըրանց ըսպասում—  
Տաղ ելինք ասում:

Յերը զվարթաձայն մեր լերգը լըռեց,  
Մըռալլ թամաղեն բեխերն ոլորեց,  
Նըրա հետ վերցըրին լիք բաժակները  
Բոլոր մեծերը  
Ու մեզ որհնեցին. — «Ապրեք, լերեխեք,  
Բայց մեզ պես չապրեք...»

Ժամանակ անցավ, նրանք ել անցան,  
Զըվարթ լերգերըս վըշտալի դարձան:



Ու յես հիշեցի մեր որը լալիս,  
 Թե մեզ որհնելիս  
 Ինչու ասացին.— «Ապրեք, լերեխեք,  
 Բայց մեզ պես չապրեք...»

Սաղաղութիւնն ձեզ, մեր անբնիտ պապեր,  
 Ձեզ տանջող ցավը մեզ ել ե պատել:  
 Այժմ, տըխրութեան թե քեֆի ժամին,  
 Մենք ել՝ որհնելիս մեր զավակներին՝  
 Ձեր խոսքն ենք ասում.— «Ապրեք, լերեխեք,  
 Բայց մեզ պես չապրեք...»

1887

## ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԸ

Արի, գութան, վարի, գութան,  
 Որն եկել ե, ճաշ դառել,  
 Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,  
 Որհնյալ ե Աստված, հորովել:

Քաշի, չեզը, ուսիդ մատանդ,  
 Քաշի, քաշենք, վար անենք.  
 Ճիպտին արա, քըշի, հոտաղ,  
 Մեր սև որին ճար անենք:

Պարտքատերը գանգատ գընաց,  
 Քոխովեն կը գա, կը ծեծի,  
 Տերտերն որհնեց, անվարձ մընաց,  
 Կը բարկանա, կանխծի:

Են որն եկան թովջի արին,  
 Հարկ են ուզում տերութեան.  
 Ի՞նչ տամ կողին ու բեզլարին...  
 Վարի, վարի, իմ գութան:

Ձեռքս պակաս, ուժքս հատած,  
 Հազար ու մի ցավի տեր,  
 Ինձ են նայում մերկ ու սոված  
 Մի տուն լիքը մանուկներ:

Արի, գութան, վարի, գութան,  
 Որն եկել ե, ճաշ դառել,  
 Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,  
 Որհնյալ ե Աստված, հորովել:

1887 մարտ

## Հ Ա Մ Ե Ր Գ

Վրտակը ժաշուից ներքև ե թըռչում,  
 Թափ առած ընկնում քարերի գլխին,  
 Չարկում ավազին, շաշում ե, ճըշում,  
 Ճըշում անհանգիստ, փըրփուրը բերնին:

Ինչպես ծերունին, ձեռով պառաված,  
 Չաչնակցում ե ժիր թունիկի չերզին,  
 Աչնպես ե ծերուկ անտառը կամաց  
 Արձագանք տալի ջրի աղմուկին:

Այն ինչ բընության զըլարթ համերգի  
 Ունկընդիրն անխոս, հաժխտենական,  
 Ժաշը մըտախոհ՝ իր մըտալը մըտքի  
 Յետևից ընկած լըսում ե նըբան:

1880 զեկտ.

## Յ Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Վ Ա Մ Պ

Վաղուց թողած բարձր ու կանաչ  
 Գահը իրենց հանգըստության,  
 Յերկու սև ամպ, հողմի առաջ  
 Գընում ելին հալածական:

Հողմը սակաչն չար հոսանքով  
 Բաժնել, ջոկել չեր կարենում,  
 Ինչքան նըրանց լայն չերկընքով  
 Դես ու դեն եր քըշում, տանում:

Ու անդադար գընում ելին  
 Քըշված հողմի կատաղությամբ,  
 Իրար կըսած ու մխափն,  
 Յերկու սև ամպ, յերկու սև ամպ...

1894

## ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

Յեւած՝ ովկիանի անդուսպ ալիքներ  
 Ծանրը հորձանքով զարկելով դեպ վեր  
 Լեռնանում ելին, գոռալով անեղ  
 Յեվ մըրբիկն ուժգին շընչում եր այնտեղ  
 Անեղը ու անվերջ  
 Տարածութեան մեջ:

«Կանգնեցեք», գոչեց վըրձինը ձեռքին  
 Կախարդ ծերունին հուզված տարերքին.  
 Ու լուռ, հընազանդ հանձարի ձայնին,  
 Մութ ալիքները փոթորկի ժամին  
 Կըտավի վըրա  
 Կանգնած են ահա:

1894

## ԱՆԴԱՐՁ ՀԱՄԲՈՐԴՆԵՐ

Իմ անցած կյանքն ու հին տարին,  
 Յերկու անգոր ծերի նըման,  
 Զըրուց տալով գընում ելին  
 Դեպի աշխարհն հավերժական:

Մինն ասում եր.— Յես ունեյի  
 Թարմ ու բուրջան ծաղիկներ,  
 Ու բոլորը մարդկանց տըվի  
 Գարնան գըրկողն առատաբեր:

Մյուսն ասում եր.— Յես ունեյի  
 Շատ ըզգացմունք ու կորով,  
 Ու վողջ յես ել նըրանց տըվի  
 Միրանըվեր յերգերով:

Մինն ասում եր.— Յես թողեցի  
 Զըմեռ ու սև են հովտում:  
 Մյուսն ասում եր.— Յես՝ թախծալի  
 Մի սիրտ բեկված ու տըրտում:

Մինը ասավ.— Բաց կը ծաղկի  
 Են հովիտը նորից նոր:  
 Մյուսը հստեղ վոչինչ չասավ,  
 Ու գնում եր գըլխակոր...

Եսպես իմ կյանքն ու հին տարին,  
 Յերկու անգոր ծերի նըման,  
 Զըրուց տալով գընում ելին  
 Դեպի աշխարհն հավերժական:

1897

Ժամանակն անվերջ, ալիգերքն անհուն.  
 Ու նրանց միջում հավիտյան սիրուն  
 Կյանքը՝ հարաշարժ հոսանք ե վարար...  
 Նորանոր ուժեր ճնշում են իրար,  
     Յեխում են թափով,  
     Իջնում տաղնապով  
     Ու կենդան, կայտառ,  
     Միշտ նոր ձևի մեջ,  
     Անդուլ, անդադար  
     Հոսում են անվերջ...

Են լայն հոսանքի, մեծ ադմուլի տակ  
 Հավիտյան անշարժ, համր ու անդիտակ,  
 Անտարբեր են տաք, յեռուն պայքարին,  
 Անցնող որերին, ապրող աշխարհին՝  
     Հզորն ու սկսր  
     Ընդմիշտ հավասար,  
     Անխափ հալվում  
     Մեծ հանգըսախ մեջ,  
     Հալվում են, ձուլվում,  
     Հանդշում են անվերջ...

1907

## Վ Ա Յ Ր Ե Ջ Ք

Քառասուն տարի բրոնած ճանապարհ՝  
 Շիտակ, անվեհեր  
 Գրնում եմ չես վեր—  
 Դեպ Անհաշտը սուրբ, աշխարհքը պայծառ:  
  
 Քառասուն տարի ճամփովն անհրկու  
 Անցել եմ հսպես  
 Ու հասել եմ չես,  
 Ճաղաղությանն եմ հասել չես հողու:  
  
 Թողել եմ ներքև, մեծ լերան տակին,  
 Յեվ փառքը, և՛ դանձ,  
 Յեվ քեն, և նախանձ.—  
 Ամենը, ինչ վոր ճընշում ե հողին:  
  
 Յեվ են ամենը, արդ նայում եմ չես—  
 Տեսնում եմ նորից  
 Իմ լերան ծերից.—  
 Ենպես հասարակ, դատարկ են ենպես...  
  
 Յեվ չես իմաստուն ու բեռը թեթև,  
 Անհոգ ծիծաղով,  
 Յերգով ու տաղով  
 Իջնում են զրվարթ իմ լերան լեռե:

1909 7/20 փետր.  
 (Քանոնում)

## Ի Մ Յ Ե Ր Գ Ը

Գանձեր ունեմ անտակ, անծեր,  
Յես հարուստ եմ, ջան, յես հարուստ:  
Ծով բարութ յուն, չընորհք ու սեր  
Ճոխ պարգև եմ առել վերուստ:

Անհուն հանքը իմ գանձերի  
Սիրտս ե առատ, լին ու ազատ՝  
Ինչքան ել վոր բաշխեմ ձրբի—  
Սերն անվերջ ե, բարին անհատ:

Յերկյուղ չունեմ, ահ չունեմ յես  
Գողից, չարից, չար փորձանքից,  
Աշխարհքով մին՝ ահա եսպես  
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Յես հարուստ եմ, յես բախտավոր  
Իմ ծընընդյան պայծառ որեն,  
Ել աշխարհ չեմ գալու հո նոր,  
Իր արվածն եմ տալիս իրեն:

1918 հունվար 5

## Գ Ա Ր Ն Ա Ն Ա Ռ Ա Վ Ո Տ

(Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Վ Ա Ն)

Բարի լուսի զանգեր զարկին  
Զընգընդալին անհւշ, անհւշ.  
Լուսը բացվեց մեր աշխարհքին  
Ճըղճըղալին անուշ, անուշ:

Հովտում առուն խոխոջում ե  
Գըլգըլալին անհւշ, անհւշ.  
Քամին բարակ շընկշընկում ե  
Զըլզըլալին անուշ, անուշ:

Կռունկն յեկավ յերամ կապած  
Կըռկըռալին անհւշ, անհւշ,  
Կաքավ քարին տաղ ե կարգում,  
Կըղկըղալին անուշ, անուշ:

Հարսն ու աղջիկ հանդերն յեյան  
Շորորալին անհւշ, անհւշ.  
Ծաղկանց բուրմունքն անմահական  
Սըլսըլալին անուշ, անուշ:

[1909]

## ԴԺԱՐ ՏԱՐԻ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Վարի, գութան ջան, վարի,  
 Շատ ե զբժար ես տարի,  
 Պապին տարան քոխվի դուռ,  
 Հարկ են ուզում, — Տուր հա, տուր...  
 — Կըսամ, քոխվա, փող չունեմ:  
 — Չունես, Շեկոն կըտանեմ.  
 — Աման, քոխվա, քեզ դուրբան,  
 Շեկոն գընա թող գութան,  
 Դարնան անենք վար ու ցանք,  
 Կալը կասենք, բերենք տանք:  
 Դարունքը լեռ գառավ ել,  
 Գութան լըծվեց հորովել...  
 Վարի, գութան ջան, վարի,  
 Դարենք ցորեն ու գարի,  
 Տանենք ածենք քոխվի փեշ,  
 Վոր չըտանի մեր գոմեշ:

[1908]

## Ճ Ա Խ Ա Ր Ա Կ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Մանի, մանի, ճախարակ,  
 Նըստենք բանի, ճախարակ,  
 Անտերին տեր ճախարակ,  
 Վորբերին հեր, ճախարակ:

Լուսնակը դուրս ե լեկել,  
 Աչքերիս լուս ե լեկել:  
 Լուսնի լուսով մանեմ լես,  
 Սիպտակ վոստեր անեմ չես,  
 Աղքատ որով ու լացով  
 Վորբեր պահեմ մանածով:

Մանի, մանի, ճախարակ,  
 Նըստենք բանի, ճախարակ,  
 Անտերին տեր, ճախարակ,  
 Վորբերին հեր, ճախարակ:

[1908]

## Ա Ղ Վ Ե Ս Ը

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Աղվեսն լեկավ բարձրը սարից,  
 Հարցձունք արավ լիքը թառից.  
 Մե՞ծ խորոզ ե հարկավոր ինձ.  
 Բաղցած աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն հագել քուրքը դեղին,  
 Պըտուտ կու դա շուրջը գեղին,  
 Զուր կըտըրվեց տատիս լեղին.  
 Դեղին աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն ասավ պտռավ տատին.  
 «Մըտիկ չեմ տա ձեռիդ փետին,  
 Կարոտել եմ թըմփիլիկ ճուտին.»  
 Անվախ աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն լեկել, նստել դեղին,  
 Յերկար ագին ծըռել վըղին,  
 Աչք ե ձըգել մեր խորոզին.  
 Են գող աղվեսն, ագին ծաղիկ:

Մին ել կանչեց տատըս պառավ.  
 Աման, հասեք, տարավ, կերավ...  
 Գըլխիս ես ինչ փորձանք բերավ  
 Անտեր աղվեսն, ագին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմիր խորոզ,  
 Ման կու գալիր գոռոզ-գոռոզ.  
 Փետուրդ արավ վողջ դաբ ու փոս  
 Են չար աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվես, աղվես, փոքրիկ դազան,  
 Վոտներըդ կարճ ու խիտտ վազան,  
 Շընհերն ամեն քեզ չը հասան,  
 Ճարպիկ աղվես, ագիդ ծաղիկ:

1906

## ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Արև բացվեց թուխ ամպերին,  
Կաքավ թըռավ կանաչ սարին,  
Կանաչ սարին՝ սարի ձերին,  
Բարև բերավ ծաղկըներին:

Սիրունիկ, սիրունիկ  
Նախշուն կաքավիկ:

Քո բուն հյուսած ծաղկըներով՝  
Շուշան, նարգիզ, նունուֆարով,  
Քո տեղ լըցված ցող ու շաղով:  
Քընես-կեղնես լերզ ու տաղով:

Սիրունիկ, սիրունիկ  
Նախշուն կաքավիկ:

Քո թև փափուկ ու խատուտիկ,  
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,  
Կարմիր-կարմիր տոտիկներով,  
Կը շորորաս ճուտիկներով:

Սիրունիկ, սիրունիկ  
Նախշուն կաքավիկ:

Յերբ կը կանգնես մամոտ քարին,  
Տաղեր կասես ծաղկըներին,  
Սարեր ձորեր զըվարթ կանես,  
Դարդի ծովին սիրտ կը հանես,

Սիրունիկ, սիրունիկ  
Նախշուն կաքավիկ:

1907

## ԱՐԱԳԻԼ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Արագիլ, բարով լեկար,  
Հայ, արագիլ, բարով լեկար.  
Դու մեզ գարնան նշան բերիր  
Մեր սրտերը ուրախ արիր:

Արագիլ, լերբ գընացիր,  
Դու մեզանից լերբ գընացիր,  
Հա՛ փչեցին բուք ու բորան,  
Ծիլ ու ծաղիկ ամեն տարան:

Արագիլ, բարով լեկար,  
Հայ, արագիլ, բարով լեկար.  
Բունըդ շինիր են հին ծառին  
Մեզ մոտ մնա՛ ամբողջ տարին:

1907



## ՍՈՒԱԿԻ ՎԻՇՏԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Մի որ տեսավ ոտար թրուչուն  
 Սոխակ կուլար կուց-կուց արուն.  
 — Ինչո՞ւ, ասավ, սոխակ սիրուն,  
 Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արուն.  
 Ինչո՞ւ, մինչ չե՞րբ դու չերերուն  
 Տըխուր կուլաս չոր թըփերուն:  
 Աշխարհ ամեն վառ քո սիրուն,  
 Եդ ճըռվըռան քո չերգերուն,  
 Հապա ինչո՞ւ դու որն ի բուն,  
 Ես լուս ու մութ առավոտուն,  
 Ես շատ անուշ գով հովերուն  
 Ախ ու վախով կուլաս արուն:  
 — Ի՞նչ կըխոսես, ոտար թրուչուն,  
 Խենթ ու խելառ դու ցընորուն.  
 Ձըմեռ նստեց մեր սարերուն,  
 Կըտրեց ջըրիկ աղբյուրներուն,  
 Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,  
 Կըտրեց ձենիկ իմ ձագերուն,  
 Ի՞նչպես չըլամ կուց-կուց արուն:  
 Ելի ասավ ոտար թրուչուն.  
 — Հերիք դու լաս, սոխակ սիրուն,  
 Հերիք դու լաս կուց-կուց արուն.  
 Ելի կուգա քեզ նոր գարուն,

Արև ծագե ես վայրերուն,  
 Հալին ձյուններ մեր սարերուն  
 Բացվին ջըրեր աղբյուրներուն,  
 Ու շուրջ առած քո ձագերուն  
 Բարև կուտաս ծաղիկներուն:

[1910]

## Կ Ա Ք Ա Վ Ի Վ Ո Ղ Բ Ը

(Ժ Ո Ղ Ո Վ Բ Դ Ա Վ Ա Ն)

Ա

Կըտուցը լիքը արին  
 Կաքավը նըստել քարին,  
 Ձեն ե տալիս, կըզկըզում,  
 Գանգատ անում հավքերին,  
 Ա՛յ քուրիկներ,  
 Ա՛յ հավքեր:

Բուն շինեցի ես սարում,  
 Ձագ հանեցի աննըման,  
 Իջավ՝ խաղա մարգերում,  
 Յեկան կալան ու տարան,  
 Ա՛յ քուրիկներ,  
 Ա՛յ հավքեր:

Են կարկաչուն վըզիկը  
 Սուր գանակով զարկեցին,  
 Են կարմըրիկ կըտուցը  
 Հուր կըրակին ձըգեցին,  
 Ա՛յ քուրիկներ,  
 Ա՛յ հավքեր:

Են մանրաքալ տոտերը  
 Կըրատեցին ծունկն ի վար,

Են խատուտիկ փետուրը  
 Վորն արին ձոր, վորը սար,  
 Ա՛յ քուրիկներ,  
 Ա՛յ հավքեր:

Են, վոր սարերն եր հասել,  
 Քամին չեկավ գում արավ,  
 Են, վոր ձորերն եր անցել,  
 Հեղեղն չեկավ ու տարավ,  
 Ա՛յ քուրիկներ,  
 Ա՛յ հավքեր:

Բ

Ել վիճեց անեմ, ել ինչ անեմ են բընում.  
 Հանգիստ չունեմ, դադար չունեմ են բընում\*  
 Ձորը մենակ՝ չիմ գիմանում են բընում,  
 Գիշերն անտակ՝ չի լուսանում են բընում.  
 Անցած որերն յեկել նորից են բընում,  
 Գեկ են դառել, ուտում են ինձ են բընում,  
 Ել չի մընում իմ սրբտիկը են բընում,  
 Ճավով լիքը, լացով լիքը են բընում:

Գ

— Սև կաքավիկ, ձեր պիտի դու նըստես հիմա\*  
 — Ձորուկ բարդի ծառի վրա:  
 — Սև կաքավիկ, թե վոր նըրա տերը գա՛ ձեր\*  
 — Լացող ուտու ճյուղքին տրխուր:  
 — Սև կաքավիկ, են տեղից ել քշեն վոր քեզ\*  
 — Կըրակ կըլնեմ, կերեմ ինձ չես...

Վան կաքավիկ,  
Սև կաքավիկ,  
Չալիկ-մալիկ  
Միրուն հավիկ:

Վան քո ճուտին,  
Են խորոտին,  
Վան սըգավոր  
Իր մոր սըրտին:

Ել չես կարդում  
Հանդ ու արտում,  
Մեր սարերից  
Կերթաս տըրտում:

Վան կաքավիկ,  
Սև կաքավիկ,  
Վան իմ կորած  
Միրուն հավիկ:

1910

## ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԶՈՒՐԸ

(ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ)

Ամպոտ սարեն ուրախ ձենով  
Զուր և գալիս անցնում շենով:  
Մի թուխ մանուկ դուրս և վազել,  
Չեռքն ու չերես պաղ լըվացել,  
Լըվացել և ձեռքն ու չերես,  
Ու դարձել ե՛ խոսել հսպես:

— Դու վճր սարեն կուգաս ջըրիկ,  
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ:  
— Յես են սարեն կուգամ մըթին,  
Վոր հին ու նոր ձուռն և գլխին:

— Դու վճր առուն կերթաս, ջըրիկ,  
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ:  
— Յես են առուն կերթամ դվարթ,  
Ուր ափերն են շուշան ու վարդ:

— Դու վճր այգին կերթաս, ջըրիկ,  
Իմ պաղ ջըրիկ ու անուշիկ:  
— Յես են այգին կերթամ դալար,  
Վոր տերն և ժիր մեջն այգեպան:

[1911]

\* \* \*

Տաղով եկավ  
Ախով գնաց Սալաթ նովան.  
Յերգով եկավ  
Վերքով գնաց Սալաթ նովան.  
Սիրով եկավ  
Սրով գնաց Սալաթ նովան.  
Սիրով քնաց Սալաթ նովան:

1913 ապրիլ 7

## ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶՈՒՄ

Մըրտիս խորքերեն  
Հովին թե ծովին  
Մի ձեն եմ լրսում. —  
Վսնց ե մի աղջիկ  
Մեզմ ու հանդարտիկ  
Անվերջ արտասովում:

Կոպիտ աշխարհ ե  
Մարդը միշտ չար ե,  
Կյանք ե կործանում,  
Կյանքն ել կործանված  
Վոր անցավ գնաց  
Ել չեա չի դառնում...

Մըրտիս խորքերեն  
Հովին թե ծովին  
Մի ձեն եմ լրսում. —  
Վսնց ե մի աղջիկ  
Մեզմ ու հանդարտիկ  
Անվերջ արտասովում:

«Թամանր... Ախ, Թամանր»  
Իդիւր... վոչ մի բառ...  
Զի պատասխանում:  
Մերը վոր կորավ

\* \* \*

Տաղով եկավ  
Ախով գնաց Սաչաթ Նովան.  
Յերգով եկավ  
Վերքով գնաց Սաչաթ Նովան.  
Սիրով եկավ  
Սրով գնաց Սաչաթ Նովան.  
Սիրով մնաց Սաչաթ Նովան:

1913 ապրիլ 7

## ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶՈՒՍ

Սըրտիս խորքերեն  
Հովին թե ծովին  
Մի ձեն եմ լրսում. —  
Վսնց ե մի աղջիկ  
Մեզմ ու հանդարտիկ  
Անվերջ արտասովում:

Կոպիտ աշխարհ ե  
Մարդը միշտ չար ե,  
Կյանք ե կործանում,  
Կյանքն ել կործանված  
Վոր անցավ գնաց  
Ել լետ չի դառնում...

Սըրտիս խորքերեն  
Հովին թե ծովին  
Մի ձեն եմ լրսում. —  
Վսնց ե մի աղջիկ  
Մեզմ ու հանդարտիկ  
Անվերջ արտասովում:

«Թամանր... Ախ, Թամանր»  
Իզմեր... վոչ մի բառ...  
Զի պատասխանում:  
Սերը վոր կորավ

Մերազ լոր մեռալ,  
Սրբունքն ե մնում...

Սըբախ խորքերն  
Հովն թե ծովն  
Մի ձեն եմ լրսում. —  
Վսնց ե մի աղջիկ  
Մեղմ ու հանդարտիկ  
Անվերջ արասովում...

1915 հունիս 16  
Աղթամար

\* \* \*  
Յերազեցի շարունակ  
Իմ կյանքի մեջ լես մանկուց,  
Ու մընացի միշտ մենակ  
Պատրանքի մեջ՝ լես մանկուց:

Յես չըզտա վոչ մեկին  
Յերազներից իմ շըքեղ,  
Յեվ վոչ մի մարդ, վոչ մի կին՝  
Հերոսներից իմ շքեղ:

Յերազեցի շարունակ  
Իմ կյանքի մեջ լես մանկուց,  
Ու մընացի միշտ մենակ՝  
Պատրանքի մեջ՝ լես մանկուց:

1917 հունվարի 5

## ԳՐԱԴԱՐԱՆԸՍ

Բաղձած են շուրջըս նրանք ամեն որ —  
 Բորր հանճարեղ մեծերն աշխարհքի,  
 Յերգում են, սրտամում ներգաշնակ ու խոր  
 Միտքն ու գաղանխքը մահի ու կյանքի:  
 Ու եսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն որ,  
 Ղոչ հաց են ուզում ինձանից, վոչ շոր:

1917 հունվարի 20

## ԴՈՒ ՉԸ ԳԻՏԵ՞Ս...

Դու չը գիտես,  
 Ինչու չեմ չես  
 Անբուժելի  
 Տըխուր եսպես...

— Ինչ ունելի՛ լավ ու պայծառ,  
 Ընկան, հանդան մի-մի, մի-մի.  
 Որորանս ել՝ միակ վոր կար,  
 Արնոտ յեղավ ու թըշնամի...

Դու չը գիտես,  
 Ինչու չեմ ձեզ  
 Քընարիս հետ  
 Գըրկել եսպես...

Մըթնեց հողուս յերկիրնքն անհուն,  
 Սիրտըս պատեց մեծ շափառուկ.  
 Մեռան կորան շուրջս ու հեռուն,  
 Քընարս ե լոկ մնացել և դուք...

1917 փետրվ. 5

Քոչաքարում յես վազել եմ  
Յեղնիկի հետ յերազ, Անուշ,  
Զըմրուխտ սարում յերազել եմ  
Զընաշխարհիկ յերազ, Անուշ:

Զըմրուխտ սարը ամպ ե պատել,  
Իմ արևի լուսը վատել,  
Աստծուն խնդիրք արի շատ ել՝  
Ինձ չըտըվեց մուրազ, Անուշ:

Իմ մուրազը շատ եր շքել,  
Դըրախտ պիտեր քաղաք ու դել,  
Յերգը հոսեր հառաչքի տեղ,  
Սերն ու բարին՝ Արազ, Անուշ:

Շատ են յեկել եսպես անցել,  
Հազար ափսոս են մարդկանց ել:  
Յես ել կերթամ, քիչ ե մնացել,  
Եսքան վազ ու վըռազ, Անուշ:

1917 Նոյեմբ. 20

Պ Ա Տ Ր Ա Ն Ք

Վեր ե կացել են սարում  
Մեր Զալակը իր թևից,  
Գընում ե մութ անտառում,  
Քաջ ախպերըս յետևից:

Զըրընգում են նըրանք խոր  
Են անտառում կուսական,  
Յես կանչում եմ նորից նոր,  
Ինձ թըվում ե, թե կըզան...

Զնը... վաղուց են, ան, նրանք  
Մեր սարերից դընացել,  
Են դիւ ձեներն ե մենակ  
Իմ ազանջում մընացել...

1918 սեպտ. 9



## ՆՎԵՐ ՎՐԱՍՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

Ձե, չի լռուել մեծ Շոթայի  
Յերգի ձենը կաթողին  
Ու դարավոր ցափն ամենի  
Ձի խորաակել են հողին:

Թընդում ե դեռ նոր ձեռքերում  
Են քնարը դովանի,  
Խընդում ե դեռ նոր յերգերում  
Վըրաստանը գեղանի:

— Վողջուհն, վողջուհն ձեզ հին ու նոր  
Արի, բարի ընկերներ,  
Արարատի կողմից ետը —  
Յեղբայրական յերգ ու սեր:

Հին որերի վերջալուսին,  
Արշալուսին նոր կյանքի  
Յերգինք սըրտանց ու միասին  
Յերգը հանուր բերկրանքի:

Բանձըր հընչի մեր յերգը թող,  
Չարի ձենը խըլացնի,  
Հընչյուններով իր կախարդող  
Յերկրե յերկիր թող անցնի:

Ամեն կողմից թող ամենին  
Հըրապուրի ու բերի  
Բաղմալեղու խըրախճանին  
Ծեր կովկասի ազգերի:

Յերենք՝ տեսով ու ճանաչով,  
Ընկեր, ախպեր, մեր ու քուր՝  
Մեր քյամանչով, ուրախ կանչով  
Գընանք դեպ կյանքն ընդճանուր:

Շատ, շատ արցունք թափվեց մեզնում,  
Մեն մի կաթիլն — մի խըրատ,  
Անլուռ, անդուլ են ե ասում —  
Ճամփա չունի գործը վատ:

Թող՝ ով կուզի՝ յերկար բարակ  
Չու տա խելքին մինչև մահ,  
Մենք խմաստուն — սիրենք, խնդանք,  
Կյանքը ես ե, ինչ վոր կա:

Չարկեք ուժգին մեծ Շոթայի  
Են քնարը վոսկեյուր, —  
Մարդը ինչ տա — են կը շահի,  
Թող խմանա վողջ աշխարհ:

Տեսնի քանի նոր ձենով ե  
Խոսում մուսան ես յերկրում,  
Պատգամներով պայծառ ու վեհ,  
Հազար ու մի յերգերում:

Վողջուհն, վողջուհն ձեզ հին ու նոր  
Արի, բարի ընկերներ,  
Արարատի կողմից ետը —  
Յեղբայրական յերգ ու սեր:

1919 ապրիլ 16

## ՍԻՐԻՈՒՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Սիրիուս, յերկնից անեղ անցվոր,  
Ո՞ւր կից լեկել,  
Ո՞ւր ես թեքել,  
Ու ճեպում ես եղբան հըզոր,  
Անճառ թափով,  
Անձեք ճամփով,  
Դարեր, դարեր հազարավոր:

Սիրիուս, յերկնից շքեղ գոհար,  
Վոր խաղում ես,  
Փաղփաղում ես  
Ճերմակ ու բիլ լուսով քո վտռ  
Ու զարդարում,  
Զըվարթ վառում  
Մեր գիշերվան ճակատը մառ, —

Ի՞նչքան աչք են վըրադ հառել,  
Նայում են քեզ  
Հիմա մեզ պես,  
Ի՞նչքան աչք ե նայել, մարել,  
Յեվ կամ ի՞նչքան  
Դեռ պիտի դան,  
Վոր անհայտից կլանք չեն առել:

Ո՞վ առաջինն ասավ վողջերթ  
Քեզ մեր հողից,

Մարդու ցեղից,  
Կամ ում աչքում պիտի անհետ  
Մի որ հատնի,  
Մարի, մըթնի  
Հըրածեշտի շողըդ հավետ...

Բարի ճամփան, հյուրըդ մեր հին...  
Յեվ թե տեսնես՝  
Մեզնից եսպես  
Մի հարցում աուր հըզոր մահին,  
— Մարդու քանի՞  
Սերունդ կանի  
Մի հըրածեշտն անստեղային:

1922 հունիս



Ueber die  
 Ueber die  
 Ueber die  
 Ueber die

Ueber die  
 Ueber die  
 Ueber die  
 Ueber die  
 Ueber die  
 Ueber die  
 Ueber die  
 Ueber die

1833

50

ՀՀ Ազգային գրադարան



NL0977275

ԳԻՆԸ 90 Կ.  
ԿԱԶՄԸ 25 Կ.

19  
1  
3342



ՕՎ. ԿՄԱՆՅԱՆ  
Լեգենդներ, Բալլադներ և Պարեր  
Երևան, ՀՀՀ Արմենիա, Երևան, 1984